ԵՄ- Հայաստան
Համապարփակ և Ընդլայնված Գործընկերության Համաձայնագրի (ՀԸԳՀ)

ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

Հունիս 2018թ.Երևան

Այս փաստաթուղթը հանդիսանում է Եվրոպական միության և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրված **Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ)** միացյալ գործողությունների ծրագիր կամ ճանապարհային քարտեզ՝ պատրաստված մի խումբ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների կողմից, ովքեր ունեն տևական փորձ ժողովրդավարական բարեփոխումների մշտադիտարկման, քննադատման և քաղաքականության զարգացման գործում: Ներկայացվող փաթեթը ընդգրկում է ՀԸԳՀ-ի հետևյալ բաժինները. *ա) դատական համակարգի անկախություն, բ) քրեական հետապնդման և իրավապահ մարմինների անկողմնակալություն ու արդյունավետություն, գ) արդարադատության մատչելիություն, դ) խոշտանգման չենթարկվելու իրավունք, ե) կյանքի իրավունք, զ) հավաքների և միավորումների ազատություն, է) ազատ քվեարկելու իրավունք, ը) արդար դատաքննության իրավունք, թ) ազատ արտահայտվելու իրավունք, ժ) ապաստանի տրամադրման և սահմանների կառավարման հարցերի վերաբերյալ համագործակցություն, ի) ապօրինի թմրամիջոցներ, լ) աշխատավայրում առողջություն և անվտանգություն, խ) կոռուպցիայի դեմ պայքար, ծ) թափանցիկ և հաշվետու կառավարում, կ) պետական գնումներ, հ) վիճակագրություն, ձ) լրատվամիջոցների ազատություն, ղ) մարդու իրավունքներ, խտրականությունից ազատ լինելու իրավունք և հիմնարար ազատություններ, ճ) կրթություն, մ) հարկային ոլորտ, յ) օդի որակ, ջրի որակ և թափոնների կառավարում:*

Ներկա փաթեթը պատրաստված է բոլոր կազմակերպությունների հետ ընդգրկուն քննարկումներից հետո և հիմնված է այնպիսի քաղաքականությունների մշտադիտարկման համատեղ փորձի վրա, ինչպիսիք են Եվրոպական հարևանության քաղաքականության (ԵՀՔ) գործողությունների պլանը (2005-2017թթ.), Ասոցացման համաձայնագրի ճանապարհային քարտեզը (2012-2013թթ.) և ոլորտային խնդիրների խորը գիտելիքը ձեռք բերված՝ Հայաստանում մարդու իրավունքների և ժողովրդավարական հաստատությունների կողմից անմիջականորեն կատարված մշտադիտարկումներից:

Փաթեթի պատրաստմանը աջակցել է Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանը և համահեղինակել են հետևյալ կազմակերպությունները.

Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության վերլուծական կենտրոն ՀԿ
Թրանսփարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն
Ժուռնալիստների Ասպարեզ ակումբ
Իրազեկ քաղաքացիների միավորում ՀԿ
Իրական աշխարհ, իրական մարդիկ ՀԿ
Իրավունքի զարգացման կենտրոն ՀԿ
Իրավունքի պաշտպանություն առանց սահմանների ՀԿ
Կանանց ռեսուրսային կենտրոն
Հայաստանի Հելսինկյան կոմիտե
Հանրային քաղաքականության ինստիտուտ ՀԿ
Հանրային քաղաքականության հետազոտությունների ազգային կենտրոն ՀԿ
Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
Արտակ Քյուրումյան, Պետական ֆինանսական կառավարման փորձագետ
Դավիթ Խաչատուրյան, ի.գ.թ., փորձագետ

Բովանդակություն

Դատական համակարգի անկախությունը 3
Քրեական հետապնդման և իրավապահ մարմինների անկողմնակալությունը և արդյունավետությունը 4
Արդարադատության մատչելիությունը 6
Խոշտանգման չենթարկվելու իրավունքը 6
Կյանքի իրավունքը 8
Հավաքների և միավորումների ազատությունը 9
Ազատ քվեարկության իրավունքը 10
Արդար դատաքննության իրավունքը 10
Արտահայտվելու ազատությունը 13
Միգրացիայի, ապաստանի տրամադրման և սահմանների կառավարման հարցերի վերաբերյալ համագործակցությունը 13
Ապօրինի թմրամիջոցներ 14
Աշխատավայրում առողջությունը և անվտանգությունը 15
Պայքարը կոռուպցիայի դեմ 15
Թափանցիկ և հաշվետու կառավարումը 18
Պետական գնումներ 20
Վիճակագրությունը 23
Լրատվամիջոցների ազատությունը 24
Մարդու իրավունքներ, խտրականությունից ազատ լինելու իրավունք և հիմնարար ազատությունները 27
Կրթություն 34
Հարկային ոլորտ 52
Օդի որակ, ջրի որակ և թափոնների կառավարում 53

Դատական համակարգի անկախությունը

ՀՈԴՎԱԾ 4. Ներքին բարեփոխումները
Կողմերը պետք է համագործակցեն հետեւյալ ոլորտներում.
(c) դատական եւ իրավական բարեփոխումների հետագա առաջընթացի ապահովում այնպես, որ երաշխավորվի դատական համակարգի, քրեական հետապնդման եւ իրավապահ համակարգի անկախությունը, որակն ու արդյունավետությունը:

Հիմնախնդիրը	Գործողությունը	Ակնկալվող արդյունքը	Հենանիշը	Ժամկետը
Արդարադատության խորհուրդը կամայականորեն է օգտագործում իր՝ որոշումներ կայացնելու լիազորությունը, որի միջոցով վերահսկում է դատավորների վարքագիծը, պատժում կամ խրախուսում նրանց:	ՀՀ դատական օրենսգրքով նախատեսել Բարձրագույն դատական խորհրդի՝ դատավորի լիազորությունները դադարեցնելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումները դատավորի կողմից բողոքարկելու հնարավորությունը	ՀՀ դատական օրենսգիրքը նախատեսում է Բարձրագույն դատական խորհրդի՝ դատավորի լիազորությունները դադարեցնելու և կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշումները դատավորի կողմից բողոքարկելու հնարավորությունը:	Բողոքարկման մեխանիզմը նախատեսված է դատակայան ատյանում (օրինակ՝ ՀՀ վճռաբեկ դատարանի պալատների լիազումար նիստին, ինչպես Իտալիայում է): Օրենսդրական կարգավորումը համապատասխանում է ԵԽ Վենետիկի հանձնաժողովի կողմից տրված կարծիքին:	Կորոշվի ավելի ուշ
ՀՀ դատական օրենսգիրքը (32-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետ) լիազորում է առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահներին դատավորի կողմից վարքագծի կանոնի առերևույթ խախտում հայտնաբերելու դեպքում այդ մասին հաղորդում ներկայացնել: Այս կարգավորումը պարունակում է չարաշահման և դատավորի անկախության սահմանափակման լուրջ վտանգներ:	ՀՀ դատական օրենսգրքից (32-րդ Հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետ) հանել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահների կողմից դատավորի կողմից վարքագծի կանոնի առերևույթ խախտում հայտնաբերելիս այդ մասին Ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովին համապատասխան հաղորդում ներկայացնելու լիազորությունը:	ՀՀ դատական օրենսգրքում կատարված փոփոխությունը նպաստել է դատավորների անկախության բարձրացմանը:	Օրենսգրքից հանված է 32-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը, որը նախատեսում է առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահների կողմից դատավորի կողմից վարքագծի կանոնի առերևույթ խախտում հայտնաբերելիս այդ մասին հաղորդում ներկայացնել Ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովին:	
Դատավորին որպես դատարան կայացրած ակտերի հիմքով անձնական պատասխանատվության	Կատարել փոփոխություն ՀՀ դատական օրենսգրքում՝ հանելով 51-րդ հոդվածի 1-ի մասով սահմանված	ՀՀ դատական օրենսգրքի նշված դրույթից «կամ կարգապահական խախտման հատկանիշներ»	Համապատասխան օրենսդրական նախագիծը ընդունվել է ԱԺ կողմից	

ենթարկելը խոչընդոտում է դատավորների անկախությանը:	կարգավորումը, որպեսզի դատավորի որպես դատարան կայացրած ակտերը չհանդիսանան նրան անձնական պատասխանատվության ենթարկելու հիմք:	բառերը փոխարինել «կամ վարքագծի կանոնների խախտման հատկանիշներ»:		
Քրեական հետապնդման և իրավապահ մարմինների անկողմնակալությունը և արդյունավետությունը **ՀՈԴՎԱԾ 4. Ներքին բարեփոխումները** Կողմերը պետք է համագործակցեն հետեւյալ ոլորտներում. (c) դատական եւ իրավական բարեփոխումների հետագա առաջընթացի ապահովում այնպես, որ երաշխավորվի դատական համակարգի, քրեական հետապնդման եւ իրավապահ համակարգի անկախությունը, որակն ու արդյունավետությունը, (d) վարչական կարողությունների ամրապնդում եւ իրավապահ մարմինների անկողմնակալության եւ արդյունավետ աշխատանքի երաշխավորում,				
Օրենսդրական նոր կարգավորումներով սահմանափակվել է ոստիկանության ու ազգային անվտանգության ծառայության անկախությունը՝ վերջիններիս ամբողջությամբ կախման մեջ դնելով ՀՀ վարչապետից:	Ոստիկանության և Ազգային անվտանգության մարմիններին վերաբերող օրինագծերով վերակազմավորել դրանք որպես նախարարություններ՝ ապահովելով վերջիններիս գործունեության նկատմամբ խորհրդարանական և քաղաքացիական վերահսկողությունը:	Ոստիկանությունն ու Ազգային անվտանգության ծառայությունն ունեն նախարարությունների կարգավիճակ կառավարության կազմում, ապահովված է դրանց գործունեության նկատմամբ խորհրդարանական և քաղաքացիական վերահսկողությունը:	Համապատասխան օրենսդրական նախագիծը ընդունվել է ԱԺ կողմից՝ ՀՀ Վենետիկի հանձնաժողովի CDL-AD(2007)016 փաստաթղթին համապատասխան: ԱԺ-ում պարբերաբար ուսումնասիրվում են ոստիկանության և ազգային անվտանգության կողմից ներկայացված հաշվետվությունները, քաղաքացիական դիտորդական խմբերն իրականցնում են անարգել դիտորդություն այդ մարմինների ներքո գտնվող ազատազրկման վայրերում:	
ՀՀ քննչական կոմիտեի և ՀՀ հատուկ քննչական ծառայության ղեկավարների	Ապահովել Քննչական կոմիտեի և Հատուկ քննչական ծառայության ղեկավարների	Համապատասխան օրենսդրական փոփոխությունների	Համապատասխան օրենսդրական նախագծերը	

ընտրությունը ՀՀ վարչապետի կողմից սահմանափակում է նրանց անկախությունը, ինչպես նաև ազատում հանրային հաշվետվողականությունից:	ընտրությունը Ազգային Ժողովի որակյալ մեծամասնությամբ, նրանց տեղակալների նշանակումը՝ ԱԺ գլխադասային հանձնաժողովներում թեկնածությունների շուրջ խորհրդակցություններ անցկացնելուց հետո: Միավորել հարկային, մաքսային և ազգային անվտանգության քննչական մարմինները Քննչական կոմիտեի կազմում՝ որպես Կոմիտեի համապատասխան ստորաբաժանումներ:	կատարման միջոցով ապահովված է քննչական մարմինների անկախությունը:	ընդունվել են Ազգային ժողովի կողմից:	
ՀՀ գլխավոր դատախազի թեկնածուի առաջադրման և ընտրության գործընթացում բացակայում են օբյեկտիվ չափանիշները, որոնք պետք է ապահովեն Գլխավոր դատախազության գործունեության անկախությունը:	Ազգային ժողովի կողմից ՀՀ գլխավոր դատախազի թեկնածուի առաջադրման և ընտրության ընթացակարգում նախատեսել մասնագիտական, ապաքաղաքական փորձաքննության անցկացում:	ԱԺ Կանոնակարգ օրենքը և դատախազության գործունեությանն առնչվող այլ օրենքները վերանայված են և Գլխավոր դատախազի ընտրության գործընթացը ներառում է փորձագիտական մասնակցություն:	Դատախազության վերաբերյալ օրենսդրությունը, ինչպես նաև Գլխավոր դատախազի ընտրության կարգը համապատասխանում են Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի Rec(2000)19 Հանձնարարականի և Վենետիկի հանձնաժողովի CDL-AD (2010)040 (§34) փաստաթղթին:	
Օպերատիվ հետախուզական գործողությունների նկատմամբ դատական և դատախազական վերահսկողության բացակայությունը նպաստում է դրանց իրականացման ժամանակ մարդու հիմնարար իրավունքների խախտմանը:	Ապահովել օպերատիվ հետախուզական գործողությունների նկատմամբ դատական և դատախազական վերահսկողություն և գործողությունների իրավական գնահատում, գործողությունների սուբյեկտի պատշաճ ծանուցում գործողությունների վերաբերյալ:	Օրենսդրորեն ամրագրված է ՕՀԳ նկատմամբ դատական և դատախազական վերահսկողություն և անձի իր նկատմամբ ՕՀԳ-ի կատարման վերաբերյալ պատշաճ իրազեկման պահանջ: Օրենսդրորեն ամրագրված է ՕՀԳ իրականացնող պաշտոնատար անձի կողմից	Օպերատիվ հետախուզական գործունեության մասին օրենքը համապատասխանում է ՄԻԵԴ չափանիշներին՝ Մասնավորապես անմեղության կանխավարկածի ապահովման պահանջին:	

		պատասխանատվությունը խախտումների դեպքում:		
Արդարադատության մատչելիությունը				
ՀՈԴՎԱԾ 12. Իրավունքի գերակայությունը եւ մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների հարգումը 1. Ազատության, անվտանգության եւ արդարադատության ոլորտներում իրենց համագործակցության մեջ Կողմերը պետք է հատկապես կարեւորեն իրավունքի գերակայության, այդ թվում՝ դատական համակարգի անկախության ամրապնդումը, արդարադատության մատչելիությունը, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով նախատեսված արդար դատաքննության իրավունքը եւ քրեական գործերով ու տուժողների իրավունքների դատավարական երաշխիքները:				
Հանրային շահերի պաշտպանության հարցերով հասարակական կազմակերպություններին համար դատարան դիմելու իրավունք չտրամադրելը սահմանափակում է անձանց համար արդարադատության մատչելիությունը:	ՀՀ դատական օրենսգրքով ապահովել հանրային շահերի պաշտպանության հարցերով հասարակական կազմակերպությունների դատարան դիմելու իրավունքը:	ՀՀ Սահմանադրական դատարանի 07.09.2010թ.ՍԴՈ - 906 որոշման համաձայն՝ ՀՀ դատական օրենսգրքում և հարակից այլ իրավական ակտերում ավելացվել է նոր կետ, համաձայն որի հասարակական կազմակերպությունները Հանրային շահերի պաշտպանության հարցերով կարող են դիմել դատարան, եթե տվյալ իրավունքի պաշտպանությունը բխում է հասարակական կազմակերպության կանոնադրությունից:	ՀՀ դատական օրենսգրքի համապատասխան փոփոխությունն ընդունվել է Ազգային ժողովի կողմից:	
Խոշտանգման չենթարկվելու իրավունքը				
ՀՈԴՎԱԾ 4. Ներքին բարեփոխումները Կողմերը պետք է համագործակցեն հետեւյալ ոլորտներում. (b) մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ապահովում:				
ՀՀ քրեական օրենսգրքի խոշտանգման սահմանումը (Հոդված 309.1), ինչպես նաև օրենսգրքի այլ Հոդվածները չեն ներառում քրեական	Քրեականացնել դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքն ու պատիժը՝ ՄԱԿ-ի Խոշտանգումների	ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսվել է հանցակազմ, որով որակվում են դաժան, անմարդկային կամ նվաստացնող	ՀՀ քրեական օրենսգրքում կատարվել է փոփոխություն, որով նախատեսվել է առանձին հանցակազմ դաժան, անմարդկային կամ	

պատասխանատվություն այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ու պատժի համար:	կանխարգելման կոնվենցիայի սկզբունքներին համաձայն:	վերաբերմունքի ու պատժի դեպքերը:	նվաստացնող վերաբերմունքի ու պատժի համար:	
Ոստիկանության ծառայողները շարունակում են հարցաքննությունների ժամանակ կիրառել խոշտանգումներ և անմարդկային վերաբերմունք ու պատիժներ ցուցմունք կորզելու նպատակով:	Խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի կանխարգելման և բացահայտման նպատակով ապահովել ոստիկանության բաժիններում բոլոր հարցաքննությունների տեսա և ձայնագրությունները:	Հարցաքննությունների տեսա և ձայնագրությունները տրամադրվում են փաստաբանին, դիտորդական խմբերի և քաղաքացիներին խոշտանգումների և վատ վերաբերմունքի կանխարգելման և բացահայտման նպատակով:	Կատարվել են օրենսդրական փոփոխություններ, համաձայն որոնց ոստիկանության բաժիններում անցկացվող բոլոր հարցաքննությունները տեսա և ձայնագրվում են:	
ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում և Ոստիկանության ՁՊՎ-ներում վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդական խմբերին հաճախ խոչընդոտում են անարգել այցեր կատարել ազատությունից զրկման վայրեր: Մյուս փակ և կիսափակ հաստատություններում չի իրականացվում կանոնավոր հասարակական մշտադիտարկում, ինչը ստեղծում է մարդու իրավունքների ոտնահարման ռիսկ:	Բոլոր փակ և կիսափակ հաստատություններում ապահովել քաղաքացիական դիտորդական խմբերի կողմից անարգել մշտադիտարկում իրականացնելու հնարավորությունը:	Փակ և կիսափակ հաստատություններում մարդու իրավունքների վիճակը գտնվում է քաղաքացիական դիտորդական խմբերի վերահսկողության ներքո, պետական մարմինները համագործակցում են դիտորդական խմբերի հետ բացահայտված խախտումների վերացման և իրավունքների պաշտպանության ուղղությամբ:	Կատարվել են անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները, ստեղծվել են քաղաքացիական դիտորդական խմբեր, ապահովված է վերջիններիս անարգել մուտքը փակ և կիսափակ հաստատություններ:	
ՀՀ հատուկ քննչական ծառայության վարույթում գտնվող գործերով	Օժտել ՀՀ հատուկ քննչական ծառայությանը օպերատիվ-հետախուզական	ՀՀ հատուկ քննչական ծառայությունն իր վարույթում գտնվող գործերի	ՀՀ հատուկ քննչական ծառայության, Օպերատիվ հետախուզական	

օպերատիվ-հետախուզական գործողություններն իրականացնում է ՀՀ Ոստիկանությունը, որը կարող է շահերի բախում առաջացնել և խաթարել գործի օբյեկտիվ քննությունը:	գործողություններ իրականացնելու լիազորությամբ:	շրջանակներում լիազորված է իրականացնել օպերատիվ-հետախուզական գործողություններ:	գործողությունների մասին ՀՀ օրենքներում կատարվել են համապատասխան փոփոխությունները:	
Ազատազրկման վայրերում պահվող ԼԳԲՏԻ անձինք և այլ խոցելի խմբերի ներկայացուցիչները մշտապես ենթարկվում են խտրական և անհարգալից վերաբերմունքի:	Ապահովել ազատազրկման վայրերում պահվող ԼԳԲՏԻ անձանց և այլ խոցելի խմբերի ներկայացուցիչների նկատմամբ ոչ խտրական և հարգալից վերաբերմունքը:	Ազատազրկման վայրերում պահվող ԼԳԲՏԻ անձինց և այլ խոցելի խմբերի ներկայացուցիչները պաշտպանված են խտրական վերաբերմունքից:	Ազատազրկման վայրերում պահվող ԼԳԲՏԻ անձինք և այլ խոցելի խմբերի ներկայացուցիչները իրենց կամքին դեմ ներգրավված չեն ՔԿՀ-ում սանիտարական աշխատանքներին, չեն ենթարկվում խտրական վերաբերմունքի և խարանի, մյուս անձանց հետ հավասար հիմունքներով օգտվում են ՔԿՀ–ների բոլոր ծառայություններից:	
Կյանքի իրավունքը **ՀՈԴՎԱԾ 4. Ներքին բարեփոխումները** Կողմերը պետք է համագործակցեն հետեւյալ ոլորտներում. (b) մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ապահովում:				
Մինչ օրս չի ապահովվել 2008թ. մարտի 1-ի 10 անձանց մահվան գործով արդյունավետ և ողջամիտ ժամկետում քննությունը:	1. Ապահովել 2008թ. մարտի 1-ի 10 անձանց մահվան գործերով արդյունավետ և ողջամիտ ժամկետում քննություն՝ բացահայտելու համար ոստիկանության և անվտանգության հրամանատարական բարձրաստիճան կազմի պատասխանատվությունը: 2. Ապահովել մարտի 1-ի գործերով տուժողների	1. Իրականացվել է գործի արդյունավետ քննություն և ապահովվել է արդար դատաքննությունը: 2. Ապահովվել է մարտի 1-ի գործերով տուժողների իրավահաջորդների լիարժեք փոխհատուցումը:	1. 2008թ. մարտի 1-ի 10 անձանց մահվան գործերով կատարված քննության արդյունքում ներգրավվել են մեղադրյալներ, մեղադրական եզրակացությունը ներկայացվել է դատարան, ապահովված է քրեական գործի հրապարակայնությունը: 2. Մարտի 1-ի գործերով տուժողների	

	իրավահաջորդների լիարժեք փոխհատուցումը:		իրավահաջորդները ստացել են լիարժեք փոխհատուցում:	
Ոչ մարտական պայմաններում տեղի ունեցած զինծառայողների մահացության դեպքերով պետությունը չի ապահովում ամբողջական, համակողմանի և օբյեկտիվ քննություն ողջամիտ ժամկետում:	Ապահովել ոչ մարտական պայմաններում տեղի ունեցած զինծառայողների մահացության դեպքերի ամբողջական, համակողմանի և օբյեկտիվ քննությունը ողջամիտ ժամկետում:	Ոչ մարտական պայմաններում տեղի ունեցած զինծառայողների մահացության գործերով ապահովվել է արդար դատաքննության իրավունքը:	Ողջամիտ ժամկետում իրականացված ամբողջական, համակողմանի և օբյեկտիվ քննությունը հանգեցրել է մեղադրյալների ներգրավմանը, ինչպես նաև բարձրագույն հրամանատարական կազմի պատասխանատվության որոշմանը:	
Հավաքների և միավորումների ազատությունը **ՀՈԴՎԱԾ 4. Ներքին բարեփոխումները** Կողմերը պետք է համագործակցեն հետեւյալ ոլորտներում. (b) մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ապահովում:				
Մինչ օրս պետությունը չի ապահովել2015թ. հունիսի և 2016թ.հուլիսի խաղաղ հավաքների Մասնակիցների և լրագրողների նկատմամբ բռնության գործադրման դեպքերով արագ, արդյունավետ և ամբողջական քննություն:	Ապահովել 2015թ. հունիսի և 2016թ.հուլիսի խաղաղ հավաքների Մասնակիցների և լրագրողների նկատմամբ բռնության գործադրման դեպքերով արագ, արդյունավետ և ամբողջական քննություն:	Ապահովվել է 2015թ. հունիսի և 2016թ.հուլիսի խաղաղ հավաքների Մասնակից անձանց, ինչպես նաև լուսաբանող լրագրողների գործերի արդար քննությունը:	Խաղաղ հավաքների մասնակիցների և լրագրողների նկատմամբ կիրառված բռնության դեպքերով հարուցվել են քրեական գործեր, պատասխանատվության են ենթարկվել համապատասխան ոստիկանության ծառայողներն, ինչպես նաև նրանց գործողությունների համար պատասխանատու հրամանատարական կազմը:	
Անձանց ձերբակալման ժամկետը ձերբակալման արձանագրության կազմման պահից հաշվարկելը խախտում է անձանց ազատության և անձեռնմխելիության իրավունքը:	Ապահովել ձերբակալման ժամկետի հաշվարկը անձի փաստացի ազատության զրկման պահից՝ միջազգային չափանիշներին համապատասխան:	Անձի ձերբակալման ժամկետը փաստացի ազատազրկման պահից հաշվարկելու արդյունքում անձն ավելի պաշտպանված է անօրինական ազատության:	ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարվել են համապատասխան փոփոխությունները՝ համաձայն որոնց անձի ձերբակալման ժամկետի հաշվարկը	2018թ.

			համապատասխանեցված է ՄԻԵԴ Հոդված 5-ի չափանիշներին:	
Ազատ քվեարկության իրավունքը **ՀՈԴՎԱԾ 4. Ներքին բարեփոխումները** Կողմերը պետք է համագործակցեն հետեւյալ ոլորտներում. (b) մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ապահովում:				
ՀՀ քրեական օրենսգրքում այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ սուտ հայտարարություն տալու կամ կեղծ ստորագրությամբ հայտարարություն դիմումին կից ներկայացնելու համար պատասխանատվություն սահմանելը կաշկանդում է դիտորդներին ազատ հաղորդում ներկայացնելու ընտրական իրավունքի խախտումների վերաբերյալ:	Վերացնել քրեական պատասխանատվությունը այլ անձի փոխարեն քվեարկելու վերաբերյալ սուտ հայտարարություն տալու կամ կեղծ ստորագրությամբ հայտարարություն դիմումին կից ներկայացնելու համար:	ՀՀ քրեական օրենսգրքի փոփոխության արդյունքում ընտրություններին մասնակցող դիտորդները և այլ անձինք կաշկանդված չեն ոստիկանություն հաղորդում ներկայացնելու իրենց կողմից բացահայտված ընտրական խախտումների Մասին:	ՀՀ քրեական օրենսգրքում կատարված փոփոխության արդյունքում օրենսգրքի 154.8-րդ Հոդվածը ճանաչվել է ուժը կորցրած:	
ՀՀ օրենսդրությունն արդյունավետ կերպով չի կանխարգելում պաշտոնի, ինչպես նաև վարչական ռեսուրսի չարաշահմամբ նախընտրական քարոզչության իրականացումը:	Կատարել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ հանձնարարականները պաշտոնի, ինչպես նաև վարչական ռեսուրսի չարաշահմամբ նախընտրական քարոզչության արգելման վերաբերյալ:	ՀՀ օրենսդրությունն ապահովում է պաշտոնի, ինչպես նաև վարչական ռեսուրսի չարաշահմամբ քարոզչության իրականացման արգելքը, որն արդյունավետ կիրառվում է պրակտիկայում:	ՀՀ քրեական, ինչպես նաև ՀՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգրքերում և այլ հարակից օրենքներում նախատեսվել են դրույթներ, որոնք արգելում են պաշտոնի, ինչպես նաև վարչական ռեսուրսի չարաշահմամբ քարոզչության իրականացումը:	2018թ.
Արդար դատաքննության իրավունքը **ՀՈԴՎԱԾ 12. Իրավունքի գերակայությունը եւ մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների հարգումը** 1. Ազատության, անվտանգության եւ արդարադատության ոլորտներում իրենց համագործակցության մեջ Կողմերը պետք է հատկապես կարեւորեն իրավունքի գերակայության, այդ թվում՝ դատական համակարգի անկախության ամրապնդումը, արդարադատության մատչելիությունը, Մարդու				

իրավունքների եվրոպական կոնվենցիայով նախատեսված արդար դատաքննության իրավունքը եւ քրեական գործերով ու տուժողների իրավունքների դատավարական երաշխիքները:				
Իրենց մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում փաստաբանները ենթարկվում են անհիմն խուզարկությունների և սահմանափակումների, ինչը խախտում է նրանց պաշտպանյալների արդարադատության մատչելիության իրավունքը:	Ընդունել օրենսդրություն, որով պաշտոնատար անձանց կարգելվի խուզարկել փաստաբաններին վերջիններիս մասնագիտական պարտականությունների կատարման ընթացքում, բացառությամբ երբ դա ունի հստակորեն ձեւակերպված հիմքեր եւ անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում իրավաչափ նպատակն ապահովելու համար, և չի խաթարում ամբաստանյալի արդար դատաքննության իրավունքը եւ հատկապես փաստաբան-վստահորդ հաղորդակցության պաշտպանվածությունը:	Ընդունված օրենսդրական փոփոխությունների արդյունքում փաստաբանների մասնագիտական գործունեությունը պաշտպանված է անհիմն խուզարկություններից և միջամտություններից:	Օրենսդրական նոր կարգավորումները սահմանում են փաստաբաններին զննելու բացառիկ հիմքերը՝ հավասարակշռելով դրանք անձանց արդար դատաքննության իրավունքի երաշխիքների հետ:	
Դատավորի կողմից փաստաբանին տուգալու լիազորությունը խախտում է արդար դատաքննության իրավունքը և սահմանափակում փաստաբանի գործունեության անկախությունը:	Կատարել փոփոխություններ դատավարական օրենսգրքերում վերացնելու համար դատավորի կողմից փաստաբանի նկատմամբ տուգանք նշանակելու լիազորությունը:	Համապատասխան օրենսդրական փոփոխությունների ուժի մեջ մտնելու արդյունքում դատավորներն այլևս չեն կարող սահմանափակել փաստաբանների անկախությունը:	ՀՀ օրենսդրությունը փոփոխվել է՝ համապատասխանության մեջ մտնելով ՄԻԵԿ 6-րդ Հոդվածի չափանիշներին, այն է՝ Կիպրիանուն ընդդեմ Կիպրոսի գործով ՄԻԵԴ վճռին (Kyprianou v. Cyprus case):	
Փաստաբանների՝ մեկ պալատի կազմում միավորման փաստը չի նպաստում փաստաբանական համայնքի անկախության ամրապնդմանը:	Ապահովել փաստաբանների միավորման ազատությունը՝ օրենսդրությունից հանելով վերջիններիս մեկ փաստաբանական պալատին անդամակցելու պարտադիր պահանջը:	Մեկից ավելի պալատների կազմում միավորվելու հնարավորության ստեղծումը նպաստում է փաստաբանական համայնքի անկախությանը, ինչպես նաև փաստաբանական	Կատարվել են անհրաժեշտ փոփոխությունները Փաստաբանության մասին և այլ հարակից օրենքներում:	

		ծառայությունների որակի բարելավմանը:		
Հանրային պաշտպանի գրասենյակը չի ապահովում անվճար իրավաբանական օգնության պատշաճ որակը:	Ապահովել հանրային պաշտպանի գրասենյակի կողմից տրամադրվող անվճար իրավաբանական օգնության ծառայության պատշաճ որակը:	Տարբեր փաստաբանների միջև մրցակցության արդյունքում աճել է Հանրային պաշտպանի կողմից տրամադրվող անվճար իրավաբանական օգնության որակը:	Հանրային պաշտպանի գրասենյակի կողմից տրամադրվող անվճար իրավաբանական օգնության ծառայությունները կարգավորվում են Պետական գնումների Մասին ՀՀ օրենքով:	
Հանրային պաշտպանի գրասենյակի տրամադրած անվճար իրավաբանական օգնությունը բավարար արդյունավետ չէ, քանի որ չի նախատեսում գործերի ներկայացում ՀՀ սահմանադրական և Մարդու իրավունքների եվրոպական դատարաններ:	Ընդլայնել Հանրային պաշտպանի գրասենյակի մանդատը՝ հնարավորություն ընձեռելով հանրային պաշտպաններին գործեր ներկայացնել նաև ՀՀ սահմանադրական և Մարդու իրավունքների եվրոպական դատարաններ:	Բարձրացել է Հանրային պաշտպանի գրասենյակի տրամադրած անվճար իրավաբանական օգնության ծառայության արդյունավետությունը:	Կատարվել են անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները:	
Գործող քրեադատավարական նորմերը լիարժեքորեն չեն ապահովում կողմերի զենքերի հավասարության սկզբունքը, քանի որ անձը, ում իրավունքները խախտվել են, չի կարող դիմել անկախ փորձագետին և օգտագործել այդ փորձագիտական կարծիքը որպես ապացույց դատարանում:	ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ապահովել, որպեսզի անձինք, ում իրավունքները խախտվել են, հնարավորություն ունենան դիմելու անկախ փորձագետին և օգտագործելու փորձագիտական կարծիքը որպես ապացույց դատարանում:	ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ գլխում կատարվել է փոփոխություն:	Կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում անձինք, ում իրավունքները խախտվել են, իրավունք ունեն ինքնուրույն դիմելու փորձագետին և օգտագործելու փորձագիտական կարծիքը որպես ապացույց դատարանում:	
ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված ցմահ ազատազրկման տարիքային շեմը, այն է՝ 18 տարեկան, չի նպաստում վերականգնողական	ՀՀ քրեական օրենսգրքով սահմանել, որ ցմահ ազատազրկման չեն կարող դատապարտվել հանցանքը կատարելիս քսանմեկ տարին չլրացած անձինք:	ՀՀ քրեական օրենսգրքում կատարվել են համապատասխան փոփոխությունները և լրացումները:	Օրենսդրական փոփոխությունների արդյունքում ցմահ ազատազրկման դատապարտման շեմը	

արդարադատության կայացմանը:			բարձրացվել է մինչև քսանմեկ տարեկանը:	
Արտահայտվելու ազատությունը **ՀՈԴՎԱԾ 4. Ներքին բարեփոխումները** Կողմերը պետք է համագործակցեն հետեւյալ ոլորտներում. (b) մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ապահովում:				
Մինչ օրս չի ապահովել 2015թ. հունիսի և 2016թ. հուլիսի խաղաղ հավաքները ցրելու ժամանակ լրագրողների նկատմամբ բռնության գործադրման դեպքերով արագ, արդյունավետ և ամբողջական քննությունը:	Ապահովել 2015թ. հունիսի և 2016թ. հուլիսի խաղաղ հավաքները ցրելու ժամանակ լրագրողների նկատմամբ բռնության գործադրման դեպքերով արագ, արդյունավետ և ամբողջական քննություն:	Ապահովվել է 2015թ. հունիսի և 2016թ. հուլիսի խաղաղ հավաքները լուսաբանող լրագրողների նկատմամբ բռնության կիրառման, նրանց մասնագիտական գործունեության խոչընդոտման դեպքերով քրեական գործերի արդար դատաքննությունը:	Խաղաղ հավաքները լուսաբանող լրագրողների նկատմամբ կիրառված բռնության դեպքերով հարուցվել են քրեական գործեր, պատասխանատվության են ենթարկվել պատասխանատու ոստիկանության ծառայողները, ինչպես նաև նրանց գործողությունների համար պատասխանատու հրամանատարական կազմը:	
ՀՀ քրեական օրենսգրքի առաջարկվող փոփոխություններով քրեականացվում է ահաբեկչության արդարացումը, որի անորոշ ձևակերպումն առաջացնում է ահաբեկչության դեմ պայքարի ներքո խոսքի և արտահայտման ազատության սահմանափակման վտանգներ:	ՀՀ քրեական օրենսգրքով բացառել ահաբեկչության դեմ պայքարի ներքո այլախոհության հետապնդումը:	ՀՀ քրեական օրենսգրքում կատարված են համապատասխան օրենսդրական փոփոխություններ:	ՀՀ քրեական օրենսգրքի ահաբեկչության վերաբերյալ հոդվածը համապատասխանում է ՄԻԵԴ-ով սահմանված խոսքի ազատության չափանիշներին և բացառում է խոսքի ազատության սահմանափակումը՝ որպես ահաբեկչություն կամ ահաբեկչության սատարում:	
Միգրացիայի, ապաստանի տրամադրման և սահմանների կառավարման հարցերի վերաբերյալ համագործակցությունը Հոդված 14				

ՀՀ տարածք օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մուտք գործելու արգելքների վերաբերյալ որոշումների ընդունման չափանիշների բացակայությունը հանգեցնում է կամայական վարչարարության իրականացմանը և խախտում է մարդու իրավունքները:	Հստակեցնել ՀՀ տարածք օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց մուտք գործելու արգելքների վերաբերյալ որոշումների ընդունման չափանիշները և դրանց հիմնավորումների և ընթացակարգերը, այդ թվում՝ բողոքարկման ընթացակարգ սահմանում և համապատասխանեցում մարդու իրավունքների չափանիշներին:	Օրենքով նախատեսված սահմանումները հասկանալի են, բողոքարկման մեխանիզմները կանխատեսելի և հստակ են, ընդունված որոշումները պատճառաբանված են և գաղտնի չեն տվյալ անձի համար:	Հայաստանում քաղաքական ապաստան հայցողների իրավական պաշտպանությունը և ընթացակարգերը սահմանված են օրենսդրությամբ և համապատասխանում են Եվրոպայի խորհրդի չափանիշներին:	
Անհրաժեշտ՝ դիտարկել և աջակցել ԵՄ և Հայաստանի միջև առանց թույլտվության բնակվող անձանց ռեադմիսիայի վերաբերյալ համաձայնագրի արդյունավետ իրականացմանը:	Իրականացնել ԵՄ և Հայաստանի միջև առանց թույլտվության բնակվող անձանց ռեադմիսիայի վերաբերյալ համաձայնագրի մոնիտորինգ (տվյալների հավաքագրման և այլ անհրաժեշտ գործիքների միջոցով):	Համապարփակ ուսումնասիրության առկայություն, ներառյալ տեղական և միջազգային համապատասխան հաստատությունների գործունեության մոնիթորինգը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված բացերը վերադարձած անձանց իրավունքների հետ կապված:	Մոնիտորինգի ազգային զեկույցի առկայություն ռեադմիսիայի և վերաինտեգրման վերաբերյալ առաջարկություններով, ինչպես նաև միգրացիոն քաղաքականության զարգացման և քաղաքացիական հասարակության բարելավման մեխանիզմների վերաբերյալ:	մեկ տարի
«Վիզաների դյուրացման համաձայնագրի» արդյունավետ իրականացման նպատակով, անհրաժեշտ է բարելավել վիզաների տրամադրման ծառայությունները:	Բարելավել վիզաների տրամադրման ծառայությունները:	ՁԼՄ-ների հետ համագործակցության միջոցով «Վիզաների դյուրացման համաձայնագրի» վերաբերյալ հրատարակությունների առկայություն, Վիզաների կենտրոնների աշխատանքի բարելավում:	Նախորդ տարիների համեմատ ավելի մեծ քանակություն. - Բիոմետիկ անձնագրերի սեփականատերերին տրված Շենգենյան բազմակի վիզաներ, - ամառվա և ձմեռային ժամանակաշրջանում ԵՄ մուտքի արտոնագրման հայտատուների համար ընդունելության «պատուհաններ»:	մեկ տարի
Ապօրինի թմրամիջոցներ Հոդված 14				

Ապօրինի թմրամիջոցների օգտագործման և պահման թույլատրելի նվազագույն շեմի ներկա կարգավորումը հակասում է մարդու իրավունքների միջազգային չափանիշներին:	Բարձրացնել ապօրինի թմրամիջոցների օգտագործման և պահման թույլատրելի նվազագույն շեմը մինչև թմրասովի հաղթահարման համար անհրաժեշտ չափաբաժինը:	ՀՀ քրեական օրենսգրքում և հարակից այլ իրավական ակտերում կատարվել են անհրաժեշտ օրենսդրական փոփոխությունները:	Քրեական օրենսգրքի հավելվածում վերանայված է քրեական հետապնդում չառաջացնող թմրամիջոցների նվազագույն չափանիշները՝ թմրասովի հաղթահարման համար անհրաժեշտ չափով:	
Աշխատավայրում առողջությունը և անվտանգությունը Գլուխ 15, Հոդված 84 Կողմերը պետք է ամրապնդեն իրենց երկխոսությունը եւ համագործակցությունը՝ ուղղված Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) «Արժանապատիվ աշխատանք» ծրագիրը, զբաղվածության քաղաքականությունը:				
Անկախ աշխատանքի տեսչության բացակայության արդյունքում խախտում է աշխատողների՝ իրենց իրավունքները արտադատական ճանապարհով պաշտպանելու իրավունքը:	Ստեղծել անկախ և արդյունավետ լիազորություններով Աշխատանքի պետական տեսչություն՝ ԱՄԿ թիվ 81 կոնվենցիայի չափորոշիչների համաձայն:	Գործում է անկախ և արդյունավետ լիազորություններով օժտված Աշխատանքի պետական տեսչություն:	Անձի աշխատանքային իրավունքների պաշտպանությունը երաշխավորված է գործուն մեխանիզմներով:	
Գործազրկության նպաստի համակարգի վերացման արդյունքում խախտվում է անձանց սոցիալական ապահովության իրավունքը:	Վերականգնել գործազուրկ անձանց տրամադրվող գործազրկության նպաստները:	Գործազուրկի նպաստը օրենսդրորեն ամրագրված է և գործնականում վերականգնված է:	Գործազուրկի կարգավիճակ ունեցող անձինք ֆինանսապես ապահովված և պաշտպանված են:	
ՀՀ կառավարության մշակած ՀՀ աշխատանքային օրենսգրքի փոփոխությունների նախագիծը պարունակում է աշխատանքային իրավունքների կոպիտ խախտումներ:	Շրջանառությունից հանել ՀՀ աշխատանքային օրենսգրքի փոփոխությունների նախագիծը:	Վերացվել է աշխատողի շահագործման հնարավորության ընձեռող օրենսդրական նախաձեռնությունը:	Անձի աշխատանքային իրավունքների պաշտպանությունը երաշխավորված է գործուն մեխանիզմներով:	

Պայքարը կոռուպցիայի դեմ

Հոդված 1, (e) Նպատակները
Սույն Համաձայնագրի նպատակներն են՝
e) ընդլայնել համագործակցությունն ազատության, անվտանգության եւ արդարադատության ոլորտում՝ նպատակ ունենալով ամրապնդել օրենքի գերակայությունը եւ մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքը.
Հոդված 4. (c) Ներքին բարեփոխումները
Կողմերը պետք է համագործակցեն՝
c) դատական եւ իրավական բարեփոխումների հետագա առաջընթացի շուրջ այնպես, որ ապահովվի դատական համակարգի, քրեական հետապնդման եւ իրավապահ համակարգի անկախությունը, որակն ու արդյունավետությունը,
Հոդված 12 (Մաս 2), Օրենքի գերակայությունը եւ մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքը
2. Կողմերը պետք է լիովին համագործակցեն իրավապահ, կոռուպցիայի դեմ պայքարի եւ արդարադատության իրականացման ոլորտների հաստատությունների արդյունավետ գործունեության շուրջ:
Հոդված 16 (Մաս 2) Կազմակերպված հանցավորության եւ կոռուպցիայի դեմ պայքարը
2. Կողմերը պետք է ամրապնդեն իրավապահ մարմինների շրջանում երկկողմ, տարածաշրջանային եւ միջազգային համագործակցությունը՝ ներառյալ Եվրոպական միության իրավապահ ոլորտում համագործակցության գործակալության (Եվրոպոլի) եւ Հայաստանի Հանրապետության համապատասխան մարմինների միջեւ համագործակցության հնարավոր զարգացումը: Կողմերը պարտավորություն են ստանձնել արդյունավետորեն ներդնելու համապատասխան միջազգային ստանդարտները, մասնավորապես այն ստանդարտները, որոնք ամրագրված են ՄԱԿ-ի 2000 թվականի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիայում եւ դրա երեք արձանագրություններում: Կողմերը պետք է համագործակցեն ՄԱԿ-ի 2003 թվականի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիային, Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի երկրների խմբի եւ ՏՀԶԿ-ի առաջարկություններին համապատասխան՝ կոռուպցիայի կանխարգելման եւ դրա դեմ պայքարի, գույքի հայտարարագրման ոլորտում թափանցիկության ապահովման, խախտումների մասին տեղեկացնող անձանց պաշտպանության եւ իրավաբանական անձանց վերջնական շահառուների վերաբերյալ տեղեկությունների հրապարակման շուրջ:

Հիմնախնդիրը	Գործողությունը	Ակնկալվող արդյունքը	Հենանիշը	Ժամկետը
Կոռուպցիայի դեմ պայքարի իրավակիրառ պրակտիկայում լուրջ խոչընդոտ է կոռուպցիոն հանցագործություններ քննող մասնագիտացված իրավապահ մարմնի բացակայությունը: Կոռուպցիայի դեմ պայքարող իրավապահ մարմինները Հայաստանում նախաքննության մարմիններն են և դատախազությունը, որոնցից ոչ մեկը չունի լիազորությունների այնպիսի ծավալ, որը կներառի ինչպես օպերատիվ-հետախուզական, այնպես էլ նախաքննական գործառույթները, ինչպես նաև կոռուպցիոն հանցագործություններ քննելու համար անհրաժեշտ մասնագիտական կարողություններ:	Ստեղծել կոռուպցիոն հանցագործություններ քննող մեկ միասնական մասնագիտացված իրավապահ մարմին:	Առկա են բավարար իրավական և ինստիտուցիոնալ հիմքեր կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքար ծավալելու համար:	Կոռուպցիոն հանցագործությունների քննությունը օրենսդրությամբ վերապահվել է մեկ միասնական մասնագիտացված իրավապահ մարմնի և իրականացվում է պատշաճ քննություն:	2020 թվականի 1-ին կիսամյակ:

Ներկայումս կոռուպցիոն հանցագործությունների ցանկը հաստատված է ՀՀ գլխավոր դատախազի 19.01.2017թ. N3 հրամանով՝ ներառելով շուրջ 70 հանցատեսակ (նախորդ ցանկը հաստատվել էր 19.11.2008թ. N82 հրամանով:) Սակայն կոռուպցիայի դեմ իրական պայքարի կարևոր քայլերից է օրենսդրական մակարդակով կոռուպցիոն հանցագործությունները ճանաչելը և սահմանելը:	Կոռուպցիոն հանցագործությունների շրջանակը սահմանել քրեական օրենսդրությամբ:	Օրենքով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների շրջանակներում կոռուպցիոն հանցագործություններ քննող մասնագիտացված իրավապահ մարմինն իրականացնում է արդյունավետ քննություն:	Կոռուպցիոն հանցագործությունների շրջանակը օրենքով սահմանված է:	2020 թվականի 1-ին կիսամյակ:
ՀՀ քաղաքացիական օրենսդրությունում, այդ թվում՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» ՀՀ օրենքում ամրագրված չէ «իրական սեփականատեր» հասկացությունը: Բացի այդ առկա չէ իրավաբանական անձի գրանցման ընթացքում իրական սեփականատերերի մասին տեղեկատվություն տրամադրելու օրենսդրական պահանջ, ինչպես նաև բացակայում է ընկերության, դրա ղեկավարների, սեփականատերերի վերաբերյալ տեղեկությունների բացահայտման համընդհանուր հասանելի հարթակը:	Ստեղծել օրենսդրական հիմքեր իրավաբանական անձանց իրական սեփականատերերի բացահայտման համար:	Իրավաբանական անձանց իրական սեփականատեր հանդիսացող ֆիզիկական անձանց վերաբերյալ տեղեկությունները հավաքվում են և հրապարակային են:	Իրավաբանական անձանց իրական սեփականատերերի ինստիտուտը կարգավորող օրենսդրությունը ընդունված է և գործնականում կիրառվում է:	2020 թվականի 1-ին եռամսյակ:
	Բարձրասիտիճան պաշտոնատար անձանց կողմից ներկայացված հայտարարագրերի հրապարակայնության աստիճանի ավելացում: Մասնավորապես, հայտարարագրի հրապարակված տարբերակում պետք է երևա շարժական և անշարժ գույքի	Արդյունքում հասարակական կազմակերպությունները և լրագրողները կկարողանան ստուգել հայտարարագրերի իսկությունը և բացահայտել չհայտարարագրված գույք: Իսկ պաշտոնատար անձինք, խոուսափելով հանրության կողմից գույքը չհայտարարագրելու փաստի բացահայտումից (և	Համապատասխան օրենսդրական փոփոխությունների ընդունում:	6 ամիս

	բնութագիրը, ինչպես նաև ստացված եկամուտների աղբյուրները: Ընդ որում, անշարժ գույքի դեպքում պետք է հրապարակվի ոչ միայն դրա նկարագիրը, այլև գտնվելու վայրը:	պատասխանատվությունից), կսկսեն ավելի բարեխիղճ հայտարարագրեր ներկայացել:		

Թափանցիկ և հաշվետու կառավարումը

Հոդված 1, (c), Նպատակները
Սույն Համաձայնագրի նպատակներն են՝
c) նպաստել Հայաստանի Հանրապետությունում ժողովրդավարության և քաղաքական, տնտեսական ու ինստիտուցիոնալ կայունության ամրապնդմանը.
Հոդված 4. (a, e) Ներքին բարեփոխումները
Կողմերը պետք է համագործակցեն՝
a) ժողովրդավարական հաստատությունների կայունության ու արդյունավետության և օրենքի գերակայության զարգացման, համախմբվածության եւ ամրապնդման շուրջ,
e) հետագայում պետական կառավարման ոլորտում բարեփոխում իրականացնելու և հաշվետու, արդյունավետ, թափանցիկ և մասնագիտացված քաղաքացիական ծառայություն մշակելու շուրջ:

Հիմնախնդիրը	Գործողությունը	Ակնկալվող արդյունքը	Հենանիշը	Ժամկետը
Ի թիվս իրավաստեղծ գործունեության վերաբերյալ տարբեր իրավակարգավորումների, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2008թ. կատարված փոփոխություններն ամրագրեցին մշակվող օրենքների նախագծերի հանրային քննարկումներ անցնելու պահանջ: Սակայն օրենքի այս պահանջը պրակտիկայում լիարժեք չի կատարվում: Մի շարք կարևոր օրենսդրական ակտեր, որոնք այսօր էլ նախաձեռնվում են կառավարության կողմից, պատշաճ հանրային քննարկումներ չեն անցնում և առանց համապատասխան հանրային քննարկումների ընդունվում են հրատապ, նկատի ունենալով, որ դրանք հաճախ հանդիսանում է նախապայման, օրինակ, տարբեր միջազգային կազմակերպությունների կողմից բյուջետային աջակցության կամ այլ վարկեր տրամադրելու	Սահմանել բոլոր օրենսդրական ակտերի նախագծերի կարգավորման ազդեցության գնահատում անցկացնելու պարտադիր պահանջ: Իրավաստեղծ գործընթացի անբաժանելի մաս դարձնել հանրային քննարկումները:	ՀՀ կառավարությունն իրականացնում է թափանցիկ և հաշվետու կառավարում:	Պետական կառավարման ոլորտը կարգավորող օրենսդրությունը պարունակում է թափանցիկության, հրապարակայնության և մասնակցային կառավարման պահանջներ և դրանք կիրառվում են գործնականում:	2018թ. 4-րդ եռամսյակ

համար: Այդ նախագծերը ողջամիտ ժամկետներում և մասնակցային չմշակվելու արդյունքում պետական մարմինների կողմից կազմվում են հապճեպ և չպահպանելով հանրային քննարկումներ իրականացնելու օրենքով սահմանված պահանջը, անհետաձգելի ռեժիմով, առանց հիմնավորման, ուղարկվում են ՀՀ ԱԺ: ՀՀ ԱԺ կանոնակարգ-օրենքն էլ իր հերթին հնարավորություն է ստեղծում անհետաձգելի ռեժիմով, առանց խորհրդարանական լսումների, հապշտապ ընդունել օրենքները: Պրակտիկայում վերջիններս հաճախ 2 ընթերցումով ընդունվում են 24-ժամվա ընթացքում՝ առանց հաշվի առնելու քաղաքացիական հասարակության կարծիքները նախագծի վերաբերյալ: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածում 2017թ. ընթացքում կատարված փոփոխություններով սահմանվել է, որ նախագծի կարգավորման ազդեցության գնահատումը /ԿԱԳ/ նախագիծը մշակող մարմինը կազմակերպում է միայն կառավարության կամ վարչապետի հանձնարարությամբ, որը հետընթաց էր նախկին կարգավորման համեմատ: Այսինքն, օրենքը որևէ պարտադիր պահանջ չի սահմանում օրենքները պարտադիր, այդ թվում՝ հակակոռուպցիոն տեսանկյունից, ԿԱԳ իրականացնելու առումով: Վերանշյալ խնդիրները շարունակում են արդիական մնալ ՀՀ ԱԺ կողմից 21.03.2018թ. ընդունված «Նորմատիվ իրավական ակտերի մասին» նոր ընդունված օրենքում: Իրավաստեղծ գործունեության ոչ թափանցիկ մեխանիզմների ներդնումը կրում է շարունակական բնույթ և չի բխում ՀՀ կառավարության 2017-2022թթ. ծրագրով ամրագրված հաշվետու և բաց կառավարման սկզբունքներից: Մասնավորապես ՀՀ ԱԺ կողմից 23.03.2018թ. ընդունվել է «Կառավարության կառուցվածի և գործունեության մասին» ՀՀ օրենքը, որը չի ապահովում իրավաստեղծ գործընթացի հրապարակայնությունը: Դրանով ներմուծված կարգավորումների համաձայն կառավարության նիստերը անցկացվելու են դռնփակ, և կառավարության անդամները կամ աշխատակազմը առանց վարչապետի թույլտվության իրավունք չունեն հրապարակել որևէ տեղեկատվություն կառավարության նիստում քննարկված հարցերի վերաբերյալ:	Կարգավորման ազդեցության գնահատում և հանրային քննարկումներ անցկացնելու պահանջի խախտումը դարձնել իրավական ակտի նախագծի հետ վերադարձման հիմք: Սահմանել հստակ չափորոշիչներ իրավական ակտերն անհետաձգելի ռեժիմով ընդունելու դեպքերի համար: Սահմանել կառավարության նիստերի օրակարգը և օրակարգում ներառվող հարցերի վերաբերյալ անհրաժեշտ նյութերը հրապարակելու պարտադիր պահանջ: Ապահովել կառավարության նիստերի դռնբացությունը և հրապարակայնությունը:			

Այս փոփոխությունները որևէ կերպ դրական հետևանքներ չեն կարող ունենալ՝ նկատի ունենալով, որ կառավարության գործունեության նկատմամբ վստահության բացակայությունը: Կառավարության նիստերի դռնբաց լինելու ակնկալիքը գուցեև արդարացված չլիներ կամ նիստերի դռնբացությունը որևէ կարևորություն չներկայացներ, եթե նիստերից առաջ փաստացի մշտապես պահպանվեին հանրության համար կարևորություն ներկայացնող իրավական ակտերի նախագծերի պատշաճ հանրային քննարկումներ անցկացնելու պահանջը, այնուհետև դրան հաջորդեր նախագծի լրամշակման աշխատանքները, որից հետո միայն վերջնական նախագիծը և կից փաստաթղթերը ներառվեին կառավարության նիստերի օրակարգում և քննարկվեին կառավարության նիստում:				

Պետական գնումներ

ՀՈԴՎԱԾ 269. ԱՀԿ-ի «Պետական գնումների մասին» համաձայնագրի հետ կապը Կողմերը հաստատում են 2012 թվականի «Պետական գնումների մասին» վերանայված համաձայնագրով[1] (ԱՀԿ-ի «Պետական գնումների մասին» համաձայնագիր) իրենց ստանձնած փոխադարձ իրավունքներն ու պարտավորությունները: ԱՀԿ-ի «Պետական գնումների մասին» համաձայնագրով սահմանված այդ իրավունքներն ու պարտավորությունները, այդ թվում՝ յուրաքանչյուր Կողմի՝ իր I Առդիրի համապատասխան հավելվածներով սահմանված մասնագրերը սույն Համաձայնագրի անբաժանելի մասն են կազմում եւ կիրառվում են վեճերի երկկողմ կարգավորման ժամանակ, ինչպես նախատեսված է 13-րդ գլխով: **ՀՈԴՎԱԾ 270**. Կիրառության լրացուցիչ ոլորտը **ՀՈԴՎԱԾ 271** Լրացուցիչ կանոնները Գնումների հայտարարությունների էլեկտրոնային հրապարակումը Գնահատման ընթացակարգերին ներկայացվող պահանջները Անգործության ժամկետը Չեղյալ հայտարարելը Հիմնադրված կազմակերպությունների մասով խտրականության բացառումը

Հիմնախնդիրը	Գործողությունը	Ակնկալվող արդյունքը	Հենանիշը
Հայտարարությունների հրապարակումը էլեկտրոնային եղանակով, ինչպես նաև դրանց	Գնումների հայտարարությունների մասին տեղեկատվությունը ամփոփ	Կբարձրանա գնումների հայտարարությունների	Հնարավոր է կատարել համադրություններ,

[1] «Պետական գնումների մասին» համաձայնագիրը փոփոխող արձանագրության հավելված (ՊԳՀ/113):

ավտոմատ վերամշակման ենթակա լինելը բխում է ՀՀ-ի ստանձնած պարտավորություններից մասնավորապես Բաց Կառավարման Գործընկերության համատեքստում: Տվյալների հրապարակումը նշված ֆորմատով ավելի մեծ հնարավորություններ կընձեռի հանրային հատվածի համար /կխնայի ժամանակը/ համադրություններ ու վերլուծություններ կատարելու համար: Ներկայումս նկատում ենք դեպքեր երբ հանրային տեղեկատվության մասով որակը չի պահպանվում, առկա են պայմանագիր կնքելու մասին հայտարարություններ առանց գումարները նշելու և այլն:	եռամսյակային տվյալներով պարտադիր ամփոփվում ու հրապարակվում է ինչպես գնումների պաշտոնական կայքում, այնպես պետական կառավարման մարմինների կայքերում: Այս տվյալների հիման վրա կայքերում ներկայացվում են եռամսյակային տեղեկատվություններ, որոնք էլ ամփոփ ձևով կներկայացվեն գնումների տարեկան հաշվետվություններում:	մասով հրապարակայնությունը և տեղեկատվության ու վիճակագրության որակը:	ինչպես նաև հասկանալ, թե որքան է կազմում գնումների հայտարարությունների մասով հասանելիության մակարդակը:
Գնահատման ընթացակարգերին ներկայացվող պահանջները. Գնահատման ընթացակարգերին ներկայացվող պահանջները՝ 30.000 դրամի վճարման դրույթը կարող է խոչընդոտներ ստեղծել բողոքների ներկայացման համար, միաժամանակ առկա են մի շարք ազդարարման համակարգեր, որոնք անվճար են, այսինքն չի նկատվում համակարգային մոտեցում, երբ թեժ գծում հայտարարություն ներկայացելը անվճար է, իսկ աղբյուրի բացահայտման պարագայում հարկ է նախնական վճարումներ կատարել:	Դյուրինացնել բոլոր շահառուների կողմից բողոքարկման համակարգի մատչելիությունը, մեծացնելով համակարգի գրավչությունը ազդարարների համար; նշվածի համատեքստում առաջարկում ենք հանել 30000 դրամ բողոքի ուսումնասիրության վճարը:	Բողոքարկման համակարգի գրավչությունը կմեծանա, ինչը կնպաստի նաև համակարգի նկատմամբ վստահության ամրապնդմանը:	Նշված մոտեցման կիրառությունը դրական կանդրադառնա համակարգի գրավչության վրա, ինչի արդյունքում կարելի է ակնկալել բողոքների թվի աճ:
Ներկայումս շահերի բախման մասին հայտարագրերը ներկայացվում են, սակայն չկա մարմին որը վերստուգում է հայտարարգրումների իսկությունը և համապատասխանությունը, և, հետևաբար, հանրությունը տեղյակ չէ դրանց վերստուգման արդյունքներից:	Պատրաստել շահեր հայտարարագրած անդամների ռեեստր, որը հնարավորություն կընձեռի վերստուգել շահերի բախման բացակայությունների մասին հայտարարությունների իսկությունը: Յուրաքանչյուր եռամսյակ պարտադիր կերպով ներկայացնել հաշվետվություն ստուգված հայտարարգրերի և դրանցում արձանագրված թերությունների/անհամապատասխանությունների բացահայտման մասով:	Միջոցառման արդյունքում ակնկալվում է մեծացնել հայտարարագրերում ներկայացված տեղեկատվության հուսալիությունը, ինչպես նաև խնդիրների մոնիտորինգ իրականացնել համապատասխան մարմնի կողմից նշված ուղղությամբ	Վիճակագրության առկայություն, թե քանի մասնակից և ովքեր են ներկայացրել շահերի բախման մասով տեղեկություններ:

		աշխատանքների կատարման ընթացքի նկատմամբ:	
Ներկայումս չեղյալ հայտարարված մրցույթների մասին տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով, այնուհանդերձ վիճակագրության համադրությունների համար ցանկալի է, որ այս տեղեկատվությունը պարտադիր կերպով հրապարակվի եռամսյակային կտրվածքով առնվազն պետական կառավարման մարմինների կայքերում:	Անգործության մասին տեղեկատվությունը՝ քանի դեպք, երբ 10 օր է պահպանվել, քանի դեպք երբ 15, ինչպես նաև այս մասով թերացումները, պարտադիր կերպով եռամսյակային կտրվածքով ամփոփել ու հրապարակել դրանք կայքում:	Կբարձրանա գնումների տեղեկատվության հրապարակայնությունը և վիճակագրական համադրությունների հնարավորությունը:	Միջոցառման իրականացման արդյունքում հնարավոր կլինի ստանալ վիճակագրություն, ինչը հետագայում կենթարկվի ինչպես լրագրողական հետաքննության, այնպես էլ մոնիտորինգի միջոցով կուսումնասիրվեն դրանց դինամիկան ու կառուցվածքը:
Ներկայումս չեղյալ հայտարարված մրցույթների մասին տեղեկատվությունը հրապարակվում է տարեկան կտրվածքով, այնուհանդերձ վիճակագրության համադրությունների համար ցանկալի է, որ այս տեղեկատվությունը պարտադիր կերպով հրապարակվի եռամսյակային կտրվածքով առնվազն պետական կառավարման մարմինների կայքերում:	Չեղյալ հայտարարված մրցույթների մասին տեղեկատվությունը պարտադիր կերպով հրապարակել եռամսյակային կտրվածքով առնվազն պետական կառավարման մարմինների կայքերում:	Կբարձրանա գնումների տեղեկատվության հրապարակայնությունը և վիճակագրական համադրությունների հնարավորությունը:	Հնարավոր է կատարել համադրություններ, ինչպես նաև հասկանալ, թե որքան է կազմում այս վիճակագրության մասով հասանելիության մակարդակը:
ԵԱՏՄ երկրների առումով առկա է տեղեկատվական բաց: Մասնավորապես սև ցուցակում հայտնված հայրենական մատակարարների մասին տեղեկատվությունը թարգմանվում է ռուսերեն և առկա է ԵԱՏՄ անդամ այլ երկրների համար: Իրավահավասարությունը ենթադրում է, որ գնումների պաշտոնական կայքում լինի նաև տեղեկատվություն Բելառուսում, ՌԴ-ում, Ղազախստանում և Ղրղզստանում սև ցուցակում ներառված մատակարարների մասին: Սև ցուցակում ներառված հայրենական ֆիրմաների ցանկը առկա է ռուսերեն ԵԱՏՄ անդամ երկրների համար, բայց ԵԱՏՄ-ում սև ցուցակ ընկած ֆիրմաների մասին	Ապահովել հավասար պայմաններ ԵԱՏՄ գնումների մասին տեղեկատվության առումով, ինչպես նաև բարձրացնել կայքի մատչելիությունը ոչ ռեզիդենտների համար:	ԵԱՏՄ երկրներում խախտումներ թույլ տված մատակարարների մասին տեղեկատվությունը կհրապարակվի գնումների պաշտոնական կայքում ինչը թույլ կտա կանխել անբարեխիղճ մատակարարների մասնակցությունը ՀՀ-ում իրականացվող մրցույթներին:	Բելառուսում, ՌԴ-ում Ղազախոստանում և Ղրղզստանում մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների մասին տեղեկատվության առկայություն գնումների պաշտոնական կայքում:

տեղեկատվությունը բացակայում է, մեր պատվիրատուների մոտ:			

Վիճակագրությունը

Հոդված 30
Կողմերը պետք է մշակեն եւ ամրապնդեն վիճակագրությանն առնչվող հարցերի վերաբերյալ իրենց համագործակցությունը՝ դրանով նպաստելով միջազգային մակարդակով համադրելի եւ արժանահավատ վիճակագրական տվյալներ ժամանակին տրամադրելու երկարաժամկետ նպատակի ապահովմանը: Ակնկալվում է, որ կայուն, արդյունավետ եւ մասնագիտական անկախ ազգային վիճակագրական համակարգի միջոցով կտրամադրվեն այնպիսի տեղեկություններ, որոնք վերաբերելի են Եվրոպական միությունում եւ Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիների, գործարարության եւ որոշում կայացնողների համար՝ նրանց ընձեռելով դրանց հիման վրա տեղեկացված ձեւով որոշումներ կայացնելու հնարավորություն: Ազգային վիճակագրական համակարգի միջոցով պետք է պահպանվեն ՄԱԿ-ի պաշտոնական վիճակագրության հիմնարար սկզբունքները եւ հաշվի առնվեն վիճակագրության ոլորտի ԵՄ օրենսդրությունը՝ ներառյալ Եվրոպական վիճակագրության գործավարության կանոնագիրքը՝ ազգային վիճակագրական տվյալների ձեւավորումը եվրոպական նորմերի եւ ստանդարտների հետ համապատասխանեցնելու նպատակով:

Հոդված 31
Վիճակագրության ոլորտում համագործակցությունը պետք է նպատակաուղղված լինի՝

(a) ազգային վիճակագրական համակարգի կարողությունների, այդ թվում՝ իրավական հիմքի հետագա ամրապնդմանը, որակյալ տվյալների եւ մեթատվյալների ձեւավորմանը, տարածման քաղաքականությանը եւ օգտագործողի համար հարմարավետությանը, եւ հաշվի առնելով պետական ու մասնավոր հատվածների, գիտական համայնքի եւ ընդհանուր առմամբ հասարակության օգտագործողներին.

(b) Եվրոպական վիճակագրական համակարգում կիրառվող նորմերին եւ փորձին Հայաստանի Հանրապետության վիճակագրական համակարգի աստիճանական մոտարկմանը.

(c) Եվրոպական միությանը տվյալների տրամադրման գործընթացի ճշգրիտ համակարգմանը՝ հաշվի առնելով համապատասխան միջազգային եւ եվրոպական մեթոդաբանությունների, այդ թվում՝ դասակարգումների կիրառումը.

(d) ազգային վիճակագրական ծառայության անձնակազմի մասնագիտական եւ կառավարման կարողությունների ընդլայնմանը՝ Եվրոպական միության վիճակագրական ստանդարտների կիրառումը խթանելու եւ Հայաստանի Հանրապետության վիճակագրական համակարգի զարգացմանը նպաստելու նպատակով.

(e) վիճակագրական «նոու-հաու»-ի զարգացման վերաբերյալ փորձի փոխանակմանը, եւ

(f) վիճակագրական տվյալների ստեղծման բոլոր գործընթացների եւ դրանց տարածման հարցում որակի ապահովման ու կառավարման խթանմանը:

Հիմնախնդիրը	Գործողությունը	Ակնկալվող արդյունքը	Հենանիշը
Ներկա վիճակագրությունը հնարավորություն չի ընձեռում դիտարկել առավել մեծ ազդեցություն ունեցող ապրանքների ու	Բարձրացնել առանձին վիճակագրական տվյալների ինդիկատիվությունը և աղեկվատվությունը,	Վիճակագրական տվյալները լիարժեքորեն արտացոլում են գնահատվող երևույթների առավել էական	ԱՎԾ կողմից պարբերաբար ամփոփվող և հրապարակվող ցուցանիշների համակարգը համալրվել է հետևյալ ցուցանիշներով.

ծառայությունների մասով գների դինամիկան, ինչը չի մեծացնում հանրության հավատը և վստահությունը ԱՎԾ-ի տվյալների նկատմամբ: Ի լրումն, չկա հստակ պարբերականություն որով հնարավոր կլիներ, օրինակ տարեկան կտրվածքով չափել ինչպես կառավարության գործունեություն արդյունավետությունը ստվերայնության կրճատման առումով, այնպես էլ ըստ իրական հատվածի առանձին սեկտորների:	բարելավել առանձին սոցիալ-տնտեսական երևույթների վիճակագրական գնահատականների որակը, դրանք առավելագույնս համապատասխանեցնել հասարակության օգտագործողների տեղեկատվական պահանջմունքներին:	հատկանիշները, հասկանալի են հասարակության օգտագործողներին, գիտական հանրույթի մոտ տարընթերցումների և թերահավատության տեղիք չեն տալիս, ընդունելի են հանրության համար և հանդիսանում են արդյունավետ որոշումների կայուն տեղեկատվական հենք:	- սպառողական գների ինդեքսի զամբյուղի հաշվարկում առավել մեծ կշիռ ունեցող (1-ից բարձր տեսակարար կշիռ ունեցող) ապրանքների/ ծառայությունների համար առանձնացված տեղեկատվություն, դրանց հենքի վրա հաշվարկվող գների ինդեքս, - ՀՀ-ում ստվերային տնտեսական գործունեության գնահատականը՝ տարեկան պարբերականությամբ, մասնավորապես՝ ստվերային տնտեսական գործունեության հարաբերակցությունը ՀՆԱ նկատմամբ, ստվերային տնտեսական գործունեության ծավալները ըստ տնտեսական գործունեության:

Լրատվամիջոցների ազատությունը

ՀՈԴՎԱԾ 99

1. Կողմերը տեսլսողական արդյունաբերության և մեդիա քաղաքականությունների մասով պետք է մշակեն կանոնավոր երկխոսություն և համագործակցեն մեդիայի անկախությունն ու պրոֆեսոնալիզմը, ինչպես նաև՝ Եվրոպական միության մեդիայի հետ կապերն ամրապնդելու համար՝ Եվրոպական ստանդարտներին և ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2005 թ. <<Մշակութային ինքնարտահայտման ձևերի բազմազանության պաշտպանության և խախտումների մասին>> կոնվենցիային համապատասխան:
2. Համագործակցությունը, ի թիվս այլնի, կարող է ընդգրկել լրագրողներին և մեդիա դաշտի այլ մասնագետներին վերապատրաստելու, ինչպես նաև՝ մեդիա դաշտին աջակցելու հարցը:

Հիմնախնդիրը	Գործողությունը	Ակնկալվող արդյունքը	Հենանիշը
Զանգվածային լրատվամիջոցների սեփականությունը թափանցիկ չէ: Չկա զանգվածային լրատվամիջոցների սեփականատերերի մասին տեղեկությունների բացահայտումը պահանջող օրենք:	«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով սահմանել զանգվածային լրատվամիջոցների սեփականատերերի հրապարակայնությունը և սեփականության բաժնեմասերը, ըստ Եվրոպայի խորհրդի բանաձևերի:	«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով սահմանված է զանգվածային լրատվամիջոցների սեփականատերերի հրապարակայնությունը: Օրենքը սահմանում է զանգվածային	Հեռուստառադիոընկերություններ ը ամեն տարի հանրայնորեն հրապարակում են իրենց սեփականտերերի բաժնեմասերի մասին տեղեկությունները:

		լրատվամիջոցների սեփականատերերի հրապարակայնությունը Եվրոպայի խորհրդի 1636 (2008) և 2065 (2015) բանաձևերին համապատասխան:	
Ըստ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ՀՀ օրենքի, «մասնավոր մուլտիպլեքսորը պարտավոր է մուլտիպլեքսն իրականացնել սեփական էլեկտրոնային հաղորդակցության ցանցի միջոցով, որի սփռման տարածքը չպետք է լինի ավելի փոքր, քան ՀՀ հանրային հեռարձակման թվային ցանցի սփռման տարածքը», ինչը նշանակում է, որ հանրապետական սփռման պարտավորություն ունենալը մենաշնորհ է մտցնում ոլորտում:	«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ՝ մասնավոր մուլտիպլեքսորի գործունեության օրենքով ամրագրված կենտրոնացումը և մոնոպոլիզացիան վերացնելու համար և վերացնել հանրապետական սփռման պարտավորություն ունենալը:	«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում վերացված է մասնավոր մուլտիպլեքսորի հանրապետական սփռման պարտավորությունը:	ՀՀ տարածքում թվային հեռարձակումը իրականացնում են երկու և ավել մասնավոր մուլտիպլեքսոր ընկերություններ:
2010թ. լիցենզիա ստացած մարզային հեռուստաընկերությունները 2016թ. հունվարի 1-ից գործում են հեռարձակման թվային համակարգով, իսկ մնացածները՝ անալոգայինով, ինչը սկզբունքորեն հակասում է թվայնացման գաղափարին և միջազգային կարգավորող նորմերին: Անալոգային հեռուստաալիքները հայտնվում են անբարենպաստ մրցակցային միջավայրում՝ ինչպես ազդանշանի որակի, պաշտպանվածության, այնպես էլ լսարանին հասանելիության ու գովազդատուների համար գրավչության առումով: Անալոգային մարզային հեռուստաընկերությունները չեն փակում օրենքի ուժով, բայց գործում են անհավասար պայմաններում, ինչը կարող է հանգեցնել նրանց	«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություններ՝ հստակեցնելու 2010թ. թվային հեռարձակման լիցենզիա չստացած մարզային հեռուստաընկերությունների կարգավիճակը և հավասար մրցակցային պայմաններ ստեղծելու բոլոր մարզային հեռուստաընկերությունների համար՝ անցում կատարելով պարզեցված արտոնագրման ընթացակարգի և թույլատրելով փոքր և մասնավոր մուլտիպլեքսների գործունեությունը:	«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում ամրագրված է հեռարձակման լիցենզավորման պարզեցված համակարգը: «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում թույլատրված է փոքր և մասնավոր մուլտիպլեքսների գործունեությունը ՀՀ տարածքում:	Բոլոր մարզային հեռուստաընկերությունները պարզեցված լիցենզավորման ընթացակարգով ստացել են թվային հեռարձակման լիցենզիաներ և թվային հեռարձակումը իրականացնում են փոքր և մասնավոր մուլտիպլեքսների միջոցով:

գործունեության աստիճանական դադարեցմանը:			
ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը պարունակում է վիրավորանքի եւ զրպարտության համար բարոյական վնասի փոխհատուցման առավելագույն չափեր:	ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածում փոփոխել վիրավորանքի եւ զրպարտության համար բարոյական վնասի փոխհատուցման առավելագույն չափերը, դրանք նվազեցնելով 10-ապատիկ անգամ:	ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածում փոփվել է վիրավորանքի եւ զրպարտության համար բարոյական վնասի փոխհատուցման առավելագույն չափերը եւ դրանք նվազեցվել են 10-ապատիկ անգամ:	Հրապարակվում է ԶԼՄ-ների եւ քաղաքացիների դեմ զրչպարտության եւ/կամ վրավորանքի դատական գործերով բարոյական վնասի փոխհատուցման դեպքերի եւ դրամական ծավալների վիճակագրություն եւ համեմատություն նախորդ տարիների համանման վիճակագրության հետ:
ՀՌԱՀ-ի ձեւավորման կարգը չի ապահովում նրա՝ որպես ոլորտը կարգավորող մարմնի անկախությունը և հաշվետվողականությունը: ՀՌԱՀ-ի անդամների ընտրության և նշանակման նկատմամբ հանրային վերահսկողության մեխանիզմներ նախատեսված չեն: Կարգավորվող մարմնի գործունեությանը պակասում է իրական թափանցիկությունը և հեռարձակման ոլորտում արդար մրցակցության ապահովումը:	«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություն՝ ապահովելու Հեռարձակման ոլորտը կարգավորող մարմնի իրական անկախությունը՝ բարեփոխելով նրանց ընտրության և նշանակման կարգը: Սահմանել ՀՌԱՀ-ի անդամների ընտրության և նշանակման նկատմամբ հանրային վերահսկողության մեխանիզմներ:	«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով վերանայված է ՀՌԱՀ-ի ձեւավորման կարգը՝ ահահովելով նրա որպես ոլորտը կարգավորող մարմնի անկախությունը և հաշվետվողականությունը:	Կարգավորվող մարմինը հեռարձակման ոլորտում իր գործունեությամբ ապահովում է արդար մրցակցություն:
«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը խոչընդոտում է հեռարձակման ոլորտի ազատականացմանը, մրցակցության զարգացմանը և հեռուստաեթերի բազմազանության ապահովմանը:	«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություն՝ անցում կատարելով լիցենզավորման պարզ ընթացակարգի, ապահովելով մրցույթների թափանցիկությունը և արդարությունը:	«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքով նախատեսված է լիցեզավորման պարզ ընթացակարգը:	Պարզեցված ընթացակարգով թվային հեռարձակման հնարավորությունը հեռարձակել կամեցող անձանց համար դառնում է հնարավոր եւ մատչելի:
Վերջին 10 տարիների ընթացքում արձանագրվել է լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնության և մասնագիտական գործունեության խոչընդոտման ավելի քան 100 փաստեր:	Իրականացնել լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնության և նրանց մասնագիտական գործունեության խոչընդոտման բոլոր դեպքերի լիարժեք և	Բացահայտված են լրագրողների դեմ կատարված ոտնձգությունների և իրավախախտումների արձանագրված դեպքերը և	Լրագրողների նկատմամբ հանցագործությունների վերաբերյալ հավաքագրվում և հրապարակվում է վիճակագրություն:

Որպես կանոն, մեղավորները չեն բացահայտվում և պատասխանատվության չեն ենթարկում: Իրավապահ մարմինները կամ չեն հարուցում քրեական գործեր այս դեպքերի առնչությամբ, կամ էլ, եթե նույնիսկ հարուցում են, ապա դադարեցնում են հանցակազմի բացակայության պատճառով:	անկողմնակալ քննություն՝ հրապարակելով զեկույց յուրաքանչյուր քննության արդյունքների մասին: Պատասխանատվության ենթարկել լրագրողների նկատմամբ նմանատիպ բռնություններ և մասնագիտական գործունեության խոչընդոտներ կատարած բոլոր մեղավորներին:	մեղավորները ենթարկված են պատասխանատվության:	

Մարդու իրավունքներ, խտրականությունից ազատ լինելու իրավունք և հիմնարար ազատությունները

Հոդված 4. Ներքին բարեփոխումները
Կողմերը պետք է համագործակցեն հետեւյալ ոլորտներում. (b) մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների նկատմամբ հարգանքի ապահովում:
Հոդված 12. (3) Մարդու իրավունքները, անխտրականությունը և հիմնարար ազատությունները հարգելը պետք է ուղղորդեն ազատության, անվտանգության եւ արդարադատության Մասով ամբողջ համագործակցությունը:

Հիմնախնդիրը	Գործողությունը	Ակնկալվող արդյունքը	Հենանիշը	Ժամկետը
Հայաստանը չունի խտրականության դեմ պայքարի համապարփակ և արդյունավետ օրենսդրություն: Խտրակլանության ենթարկվածները զրկված են արդյունավետ իրավական պաշտպանությունից, քանի որ առկա իրավական դաշտը չի տալիս խտրականության սահմանումը, իսկ ներպետական դատավարական իրավանորմերը խոչընդոտներ են առաջացնում խտրականության դեպքերի արդյունավետ քրեական հետապնդման ճանապարհին: Չկան խտրականության կանխարգելման եւ հավասարության ապահովման արդյունավետ մեխանիզմներ, քանի որ օրենսդրությամբ չեն նախատեսվում այս ոլորտում	Ընդունել խտրականության դեմ պայքարի համապարփակ եւ արդյունավետ օրենսդրություն	Օրենքով նախատեսվում են պաշտպանության եւ արդարադատության մատչելիության արդյունավետ մեխանիզմներ եւ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ խտրականությունից տուժած անձանց համար, Օրենքը սահմանում է ՀԿ-ների իրավական կարգավիճակը՝ երաշխավորելով խտրականության դեպքերով actio popularis խմբային հայցեր ներկայացնելու դատավարական իրավունքը: Օրենքով սահմանվում են կառավարության, ՏԻՄ-երի եւ գործատուների գործառույթները եւ պոզիտիվ պարտավորությունները խտրականության կանխարգելման եւ հավասարության ապահովման հարցում, Ստեղծված է հավասարության անկախ եւ արդյունավետ ազգային մարմին, որի անկախությունը երաշխավորված է թե՛ ինստիտուցիոնալ, թե՛ գործառնական	Եվրոպական միության խորհրդի դիրեկտիվ 2000/43, ՄԻԵԴ-ի որոշումներ, ECRI-ի ընդհանուր քաղաքականության վերաբերյալ թիվ 2 հանձնարարական, CRI(2018)06	

պետական մարմինների եւ տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) պոզիտիվ պարտավորությունները:		մակարդակներով: Հավասարության մարմնին վերապահված են զոհերին օժանդակելու եւ դատական վեճեր վարելու իրավասություններ, որով երաշխավորվում է նրա արդյունավետությունը:		
Կրոնի ազատության մասին գործող օրենքը սահմանափակումներ է նախատեսում կրոնական կազմակերպությունների գրանցման եւ գործունեության առումով: Մյուս կողմից, այն արտոնություններ է վերապահում Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու համար, եւ վերջինս բացառիկ հնարավորություն ունի աշխատելու հիվանդանոցներում, մանկատներում, գիշերօթիկ դպրոցներում, զինվորական ստորաբաժանումներում եւ քրեակատարողական հիմնարկներում: 2011- 2018 թվականների ընթացքում կառավարությունն առաջարկել է նոր օրինագծեր, որոնք հստակորեն չեն սահմանել, որ ՀԱԵ-ի նկատմամբ նույնպես տարածվում է օրինագիծը՝ այդկերպ սպառնալով էլ ավելի խորացնել ՀԱԵ-ի համեմատությամբ կրոնական այլ	Վերանայել Կրոնական կազմակերպությունների Մասին օրենքի 2017 թվականի նախագիծը	Օրենքը հավասարապես կիրառելի է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու եւ կրոնական այլ կազմակերպությունների նկատմամբ, Վերացված են կրոնական կազմակերպությունների գրանցման պարտադիր պահանջը եւ գրանցումն անհարկի ծանրաբեռնող գործոնները, Խտրական սահմանափակումները եւ ոչ ողջամիտ պահանջները կրոնական կազմակերպությունների անդամակցության եւ ֆինանսավորման առումով վերացված են Կրոնի կամ համոզմունքի ազատության արտահայտման սահմանափակումներն համահունչ են ՄԻԵԿ-ին:	Վենետիկի հանձնաժողովի CDL-AD(2011)028, Վենետիկի հանձնաժողովի CDL-REF(2018)006	

կազմակերպությունների նկատմամբ խտրականությունը:				
ՀԱԵ-ն օրենքով սահմանված մենաշնորհ ունի կրթության ոլորտում եւ վտանգում է հանրակրթության աշխարհիկ բնույթը: ՀԱԵ-ի պատմության առարկայի բովանդակությունը եւ դասավանդումը տեղեկություններ եւ գիտելիք չեն հաղորդում օբյեկտիվ, քննադատական եւ բազմակարծիք եղանակով, եւ հավասազոր են ինդոկտրինացիայի: ՀԱԵ-ն նաև ունի բացառիկ ներկայություն զինված ուժերում, որտեղ իրականացվում է զորակոչիկների զանգվածային պարտադիր մկրտություն, ինչպես նաեւ՝ իրականացվում են ամենօրյա պարտադիր աղոթքներ:	Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատմության կրոնական դասընթացի դասավանդման պրակտիկան համապատասխանեցնել ԵԱՀԿ-ի Տոլեդոյի սկզբունքներին:	Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատմություն առարկան կա՛մ հանված է հանրակրթարանների ուսումնական ծրագրից, կա՛մ դարձված է կամընտիր եւ համահունչ է ԵԱՀԿ-ի Տոլեդոյի սկզբունքներին: Զինված ուժերում բացառված են պարտադիր կրոնական միջոցառումները:	ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի Տոլեդոյի սկզբունքներ, 2017	
Ընտանեկան բռնության Մասին օրենքի ընդունումից առաջ նախագծում վերջին փուլում կատարված փոփոխություններն ազդարարում են իրավունքների պաշտպանությունից անցումն ընտանեկան միավորի պահպանմանը: Օրենքը, որը ներկայումս կոչվում է Ընտանիքում բռնության կանխարգելման, տուժողների պաշտպանության եւ ընտանիքում համերաշխության վերականգնման Մասին օրենք, ավանդական արժեքների ամրապնդումը եւ ընտանիքում ներդաշնակության վերականգնումը հռչակել է օրենքի ուղղորդող սկզբունքներ: Արդյունքում օրենքը չի քրեականացնում ընտանեկան բռնությունը եւ մեծապես կենտրոնանում է բռնարարի եւ տուժողի հաշտեցման ուղղությամբ,	Վավերացնել Կանանց նկատմամբ բռնության եւ ընտանեկան բռնության կանխարգելման եւ դրանց դեմ պայքարի Մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան:	Ընտանեկան բռնության կանխարգելման, տուժողների պաշտպանության, իրավախախտների քրեական հետապնդման ոլորտներում ազգային օրենսդրությունը եւ քաղաքականություններն համապատասխանեցված են Ստամբուլյան Կոնվենցիային:	GREVIO-ի պարբերական զեկույց	

որն հակասում է մարդու իրավունքների միջազգային չափանիշներին:				
Կառավարությունը չի ապահովում Կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների Մասին օրենքի կատարումը, քանի որ չկան հստակորեն սահմանված պատասխանատուներ եւ իրագործման գործառնական մեխանիզմներ:	Մշակել Կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ հավասար հնարավորությունների Մասին օրենքի կիրարկման արդյունավետ մեխանիզմներ:	Օրենքով սահմանված գենդերային խտրականության արգելված ձևերի ցանկը ընդլայնվել է և համապատասխանեցվել միջազգային չափանիշներին, Օրենքում տարանջատված են գենդերային խտրականության դրսևորումներն ըստ ոլորտների (զբաղվածություն, կրթություն, գիտություն, սպառողների պաշտպանություն, սոցիալական ապահովություն, առողջապահություն և այլն), Համապատասխան օրենսդրական ակտերում սահմանված են քրեական, վարչական և նյութական պատասխանատվության միջոցներ Օրենքի դրույթների խախտման, ՝ այն է՝ գենդերային խտրականություն դրսևորելու դեպքում, Գենդերային խտրականության հարցերով դատական պաշտպանության իրավունքի իրականացման համար կատարվել են փոփոխություններ դատավարական օրենսգրքերում և նախատեսել նշված գործերով դատավարական հատուկ նորմեր (օրինակ՝ ապացուցման բեռի բաշխման վերաբերյալ)՝ ելնելով դրանց առանձնահատկությունից, Ընդլայնվել են Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունները գենդերային խտրականության հարցերով, Մասնավորապես, նա լիազորվել է քննելու գենդերային խտրականության ենթարկված անձանց բողոքները և կայացնելու պարտադիր կատարման ենթակա որոշում Ապահովվել է Օրենքից բխող և դրա կատարմանն ուղղված ենթաօրենսդրական ակտերի ընդունումը, Ընդլայնվել են Վարչապետին կից կանանց և տղամարդկանց հավասարության հարցերով խորհրդի լիազորությունները՝ միջազգային ընդունված չափանիշներին համապատասխան, Համալիր մոտեցում է ցուցաբերվում	CEDAW-ի եզրափակիչ դիտարկումները Հայաստանի պարբերական զեկույցի վերաբերյալ	

		գենդերային մեյնսթրիմինգի իրականացման հարցում և ապահովել է դրա իրականացման իրավական բազան՝ միջազգային չափանիշներին համապատասխան: Օրենքով սահմանվել է գենդերային փորձաքննություն իրականացնող մարմինը և կարգավորվում են դրա իրականացման հետ կապված բոլոր հարաբերությունները:		
Կառավարությունը փոփոխություններ է կատարել Մարդու վերարտադրողական առողջության եւ իրավունքների Մասին օրենքում՝ եռօրյա սպասման պարտադիր ժամանակահատված եւ պարադիր խորհրդատվություն սահմանելով հղիության արհեստական ընդհատման դիմող կանանց համար, ինչպես նաեւ՝ պատիժներ սահմանելով պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատում կատարող բժիշկների նկատմամբ: Նոր խոչընդոտներ ստեղծելով կանանց համար վերարտադրողական առողջության օրինական ծառայություններ ստանալու ճանապարհին, եւ խախտելով կանանց որոշումներ կայացնելու իրավունքը, այդ պահանջների նախատեսումը խորացնում է հղիության արհեստական ընդհատման խարանը եւ վտանգում կանանց առողջությունը եւ բարեկեցությունը: Այս մոտեցման մեջ հաշվի չեն առնվում արու զավակներին նախընտրելու խորքային պատճառները, ինչպիսիք են գենդերային վնասաբար կարծրատիպերը եւ նորմերը, փոխարենը՝ սահմանափակելով	Ուժը կորցրած ճանաչել այն օրենքները եւ քաղաքականությունները (եւ ձեռնպահ մնալ նորերն ընդունելուց), որոնք խոչընդոտներ են ստեղծում սեռական եւ վերարտադրողական առողջության ծառայություններ ստանալու ճանապարհին, ինչպես նաեւ որդեգրել իրավունքահեն քաղաքականություններ, որոնք կանդրադառնան պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման խորքային պատճառներին:	Վերացված են սեռական եւ վերարտադրողական առողջության ծառայությունների ստացման ճանապարհին կանանց համար առկա խոչընդոտները՝ ներառյալ կողմնակալ խորհրդատվությունը եւ պարտադիր սպասաժամանակը:	Մարդու վերարտադրողական առողջության եւ իրավունքների Մասին օրենքում փոփոխություններն համահունչ են Տնտեսական, սոցիալական եւ մշակութային իրավունքների միջազգային հանձնաժողովի թիվ 22 ընդհանուր մեկնաբանությանը, 2016:	

կանանց վերարտադրողական ազատությունները:				
ԼԳԲՏԻ անձինք չեն ստանում օրինական ճանաչում, քանի որ սեռական կողմնորոշումը եւ գենդերային ինքնությունը ներառված չեն Հայաստանի իրավական դաշտում, որը սահմանափակում է նրանց նկատմամբ կատարվող բազմաթիվ հանցագործությունների դեպքում իրավական պաշտպանության դիմելու հնարավորությունը: Առկա օրենսդրությամբ նախատեսված չէ ատելության խոսքի սահմանումը կամ պատասխանատվություն ատելությա խոսքի համար: Քրեական օրենսգրքում սեռական կողմնորոշումը եւ գենդերային ինքնությունը չեն համարվում ծանրացուցիչ հանգամանքներ ծանր հանցագործությունների պարագայում:	Վերանայել ատելության խոսքի եւ ատելության հանցագործությունների վերաբերյալ գործող օրենսդրությունը:	Հակախտրականության օրենսդրությունը ճանաչում է սեռական կողմնորոշումը եւ գենդերային ինքնությունը որպես պաշտպանված հատկանիշներ: Ատելության խոսքի սահմանումը եւ ատելության խոսքի համար պատասխանատվությունը նախատեսված են օրենսդրությամբ, Անձի սեռական կողմնորոշման եւ/կամ գենդերային ինքնության հիմքով հանցանք գործելը համարվում է հանցանքը եւ պատիժը ծանրացնող հանգամանք:	Ատելության հիմքով հանցագործությունների օրենսդրական կարգավորմա վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի չափանիշներ, 2009	
Հայաստանը չի վավերացրել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը: Արդյունքում, անձինք և խմբերը չեն կարող բողոքներ ներկայացնել հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոմիտեին `Կոնվենցիայի դրույթների վերաբերյալ մասնակից պետությունների խախտումների վերաբերյալ:	Վավերացնել Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը	Այն անձինք կամ խմբերը, որոնք պնդում են, որ Կոնվենցիայի մասնակից պետության կողմից խախտվել են իրենց իրավունքները, կարող են բողոք ներկայացնել Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հանձնաժողովին:	Հանձնաժողովի հանձնարարականներ	
Գործող օրենսդրության համաձայն, հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք կարող են ճանաչվել անգործունակ՝ այդկերպ զրկվելով իրենց իրավունքները լիարժեք եւ պատշաճ կերպով իրականացնելու	Փոփոխել Քաղաքացիական դատավարության եւ Քաղաքացիական օրենսգրքերը՝ վերացնելով գործունակությունից	Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք լիարժեք եւ պատշաճ կերպով իրականացնում են իրենց իրավունքները եւ անկախորեն կայացնում են իրենց կյանքին առնչվող որոշումներ,	Քաղաքացիական դատավարության և քաղաքացիական օրենսգրքերում կատարված փոփոխությունները համապատասխանում են ՀՌԿԿ-ի 12, 27, 29 հոդվածներին:	

եւ իրենց կյանքին վերաբերող որոշումներն անկախորեն կայացնելու հնարավորությունից: Չկան անձի գործունակության վերականգնման արդյունավետ մեխանիզմներ: Անձի անգործունակությունը վիճարկող գործերի դատական քննության ընացքում չի ապահովվում կողմերի զենքերի հավասարությունը, եւ անգործունակ ճանաչված անձի համար նշանակվում է օրինական ներկայացուցիչ՝ հաշվի չառնելով տվյալ անձի կարծիքը:	զրկման բացարձակ նորմը՝ փոխարենը նախատեսելով այլ միջոցներ եւ երաշխիքներ, որոնք հիմնված կլինեն անձի վիճակի ծանրության վրա:	Առկա են անձի գործունակության վերականգնման արդյունավետ մեխանիզմներ, Անձի գործունակության վիճարկման գործերի դատական քննության մեջ ապահովված է կողմերի զենքերի հավասարությունը:		
Առողջապահության ընդանուր ծախսերի ընդամենը 2.7%-ն է հատկացվում հոգեկան առողջությանը, եւ այդ ծախսերի 88%-ն հատկացվում է հոգեբուժությանը	Պետական ֆինանսական օժանդակություն հատկացնել՝ ապահովելու համար Հոգեկան առողջության 2014-2019 թթ. ռազմավարությամբ նախատեսված համայնքահեն ծառայությունների մատուցումը:	Ապահովված է բավարար պետական ֆինանսավորում հոգեկան առողջության ծառայությունների ապաինստիտուցիոնալացման եւ համայնքահեն ծառայությունների ստեղծման համար՝ Հոգեկան առոջության 2014-2019 թթ. ռազմավարությանը եւ գործողությունների ծրագրին համահունչ:	Հոգեկան առողջության հարցերով զբաղվող անձանց համայնքային ծառայությունները ստանում են բավականաչափ ֆինանսավորում `2013-2016թթ. Հոգեկան առողջության հայեցակարգի և գործողությունների ծրագրի և 2014-2019թթ. Հոգեկան առողջության ռազմավարության շրջանակներում իրենց համայնքներում բոլոր շահառուներին մատչելի ծառայություններ մատուցելու համար:	
Բազմաթիվ խնամառուներ պարտադիր բուժում են անցնում հոգեբուժական հիվանդանոցներում, որն իրենք չեն կարող ինքնուրույն վիճարկել. չկան անձի կողմից հիվանդանոցագրումը վիճարկելու ուղղակի մեխանիզմներ: Անձի ազատման մասին դատական որոշում կայացնելու միջնորդություն կարող է ներկայացնել միայն հիվանդանոցը:	Ներդնել օրենսդրական նորմեր, որոնցով կպահանջվի փաստաբանի մասնակցությունն անձին հոգեբուժական բժշկական հաստատություն ընդունելու գործընթացի ամենասկզբից:	Օրենսդրական փոփոխություններով ապահովված է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց համար անվճար իրավաբանական օգնության մատչելիությունը:	Փոփոխություններ՝ «Հոգեբուժական խնամքի մասին» օրենքում և համապատասխան օրենքներով, համաձայն CRPD- ի 13-րդ հոդվածի:	

Հոգեբուժական հաստատություններում գտնվող անձինք ենթարկվում են վատ վերաբերմունքի, մասնավորապես՝ ֆիզիկական եւ հոգեբանական բռնության, աշխատանքային շահագործման, զսպման միջոցների չափից ավելի օգտագործման, եւ չեն ստանում պատշաճ եւ որակյալ բուժօգնություն: Հաստատություններում մահվան դեպքերը լիարժեքորեն եւ արդյունավետորեն չեն քննվում:	Ապահովել կառավարական օժանդակությամբ բուժօգնության եւ խնամքի ծառայություններ մատուցող հաստատությունների նկատմամբ անկախ քաղաքացիական վերահսկողությունը:	Առողջապահության նախարարի հրամանով ստեղծված դիտորդական խումբն իրավունք ունի դիտարկում իրականացնել հոգեկան հաշմանդամություն ունեցող անձանց համար խնամքի եւ բուժման ծառայություններ իրականացնող հաստատություններում:	Հոգեբուժության խնամքի մասին օրենքը, նախարարի հրամանագիրը քաղաքացիական մոնիթորինգի խորհրդին ապահովում են պետական աջակցության օգնության և բուժման ծառայութ-ի անխափան մուտքը: Քաղ.մշտադիտարկմախորհուրդը հրապարակում է զեկույցներ և առաջարկություններ ձևակերպում այդ հաստատություններում մարդու իրավունքների պայմանների վերաբերյալ:	

Կրթություն

ՀՈԴՎԱԾ 14. Միգրացիայի, ապաստանի տրամադրման եւ սահմանների կառավարման հարցերի վերաբերյալ համագործակցությունը 2. Համագործակցությունը պետք է հիմնված լինի հատուկ կարիքների գնահատման վրա, որն իրականացվում է Կողմերի միջեւ փոխադարձ խորհրդակցության միջոցով եւ պետք է իրականացվի իրենց համապատասխան օրենսդրության համաձայն: Մասնավորապես, այն պետք է կենտրոնանա՝ (c) ընդունման կանոնների եւ ընդունված անձանց իրավունքների ու կարգավիճակի, օրինական բնակվող՝ քաղաքացի չհանդիսացող անձանց նկատմամբ արդարացի վերաբերմունքի եւ նրանց ինտեգրման, կրթության եւ վերապատրաստման, ինչպես նաեւ ռասիզմի ու քսենոֆոբիայի դեմ ուղղված միջոցառումներին.				
Հիմնախնդիրը	**Գործողությունը**	**Ակնկալվող արդյունքը**	**Հենանիշը**	**Ժամկետը**

2014-2015թթ. ընթացքում պատերազմական գործողությունների արդյունքում սկսվեց սիրիահայերի ներգաղթ Հայաստան: Այս ընթացում Հայաստան ժամանակավոր կամ մշտական բնակության տեղափոխվեցին բազմաթիվ սիրիահայ ընտանիքներ՝ այդ թվում երեխաներ: Սակայն երեխաների ներառումը հանրակրթության մեջ սահուն կերպով տեղի չունեցավ, քանի որ ներառական կրթության համակարգը՝ թե մարդկային ռեսուրսների. թե մոթեդաբանական տեսանկյունից, պատրաստ չէր հասցեագրել հայերեն լեզվի իմացության հետ կապված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության մեջ լիարժեք ներառման կարիքները:	Համընդհանուր ներառականությանն անցման ռազմավարական ծրագրի շրջանակում մշակել և ներդնել սիրիահայ, ինչպես նաև այլ ազգի ներգաղթյալ երեխաների հանրակրթության մեջ ինտեգրման և լիարժեք ներառման ռազմավարական ծրագիր, ինչպես նաև ապահովել համապատասխան ուսումնամեթոդական և տեխնիկական բազա, և վերապատրաստված ուսուցչական համակազմ:	Սիրիահայ և/կամ այլ ազգի երեխաների հանրակրթության մեջ լիարժեք ներառվելու համար անհրաժեշտ պայմանների կարիքը Հանրակրթության մասին ՀՀ օրենքով սահմանված է, որպես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք և պետական բյուջեից յուրաքանչյուր տարի հատկացվում են միջոցներ՝ այդ կարիքի պատշաճ հասցեագրման համար: ԿԳՆ համակարգում ստեղծված է արագ արձագանքման մեխանիզմ, որը թույլ է տալիս անհապաղ աջակցություն տրամադրել ներգաղթյալ այլ ազգի կամ հայերենին չտիրապետող հայազգի երեխաներին՝ լեզվական խոչընդոտը արագ հաղթահարելու համար:	2019թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ տարածքում մշտական կամ ժամանակավոր բնակվող բոլոր սիրիահայ երեխաների կրթության մեջ ներառման կրթության առանձնահատուկ պայմանի կարիքները գնահատված են: Երեխաների առնվազն 80%-ը կանոնավոր հաճախում է դպրոց և ստանում համապատասխան օժանդակություն, այդ թվում՝ լեզվական խոչընդոտի հաղթահարման համար:	1 տարի

2011-2016թթ. ընթացքում տարբեր կազմակերպությունների և անհատների կողմից իրականացված հետազոտություններն ու քաղաքականության վերլուծությունները վկայում են այն մասին, որ հանրակրթական դասագրքերում առկա է գենդերային, կրոնական և էթնիկ հատկանիշով խտրական բովանդակություն: Հետազոտությունները վկայում են նաև ուսուցիչների վարքագծում և երեխաների նկատմամբ վերաբերմունքի մեջ խտրական մոտեցումների դրսևորումների մասին: Բացի դրանից, ՀՀ կառավարության կողմից ընդունված և/կամ մշակված մի շարք քաղաքականության փաստաթղթերում առաջնահերթություն է տրվում այսպես կոչված «ազգային արժեքների», «ռազմահայրենասիրական» «բարոյահոգեբանական» դաստիարակությանը, որոնց ներքո հիշյալ ռազմավարական փաստաթղթերով փաստացի քարոզվում է օտարատյացություն, իրականացվում է այսպես կոչված «օտար արժեքների» նկատմամբ հակապրոպագանդա և վախի մթնոլորտի ձևավորում՝ երեխաների շրջանում: Այս ամենը կարող է հանգեցնել նաև	1. Իրականանացնել հանրակրթական դասագրքերի բովանդակության գնահատում՝ դրանցում ռասիզմի և օտարատյացության դասավանդման ռիսկերի բացահայտման լույսի ներքո: Ելնելով գնահատման արդյունքներից՝ վերաթողարկել բոլոր այն դասագրքերը, որոնցում հայտնաբերվել են վերոհիշյալ ռիսկերը: 2. Վերանայել ուսուցիչների վերապատրաստումների մեթոդաբանությունն ու ծրագրերը՝ ներառելով մարդասիրական և մարդակենտրոն, հումանիստական, հակախտրական, այլ ազգերի, ռասաների և էթնիկ խմբերի նկատմամբ հարգանքի վրա հիմնված արժեհամակարգի ձևավորմանն ուղղված ուսուցման գործընթացի կազմակերպման մեթոդական մոդուլներ: Յուրքանչյուր տարի նշված մոդուլով վերապատրաստել ուսուցչական	1. Հանրակրթական բոլոր դասագրքերում բացակայում է ռասսիզմ և օտարատյացություն սերմանող բովանդակություն: 2. Ուսուցիչների վերապատրաստման ծրագիրը ներառում է ուսուցիչների վարքագծում և վերաբերմունքի մեջ ռասիզմի և օտարատյացության հնարավոր երևույթների հաղթահարմանն ուղղված և հանդուրժողականություն և հակախտրականություն ուսուցանող համապատասխան ուսումնական մոդուլ: 3. Դասավանդման գործընթացն ու ուսուցիչների վերաբերմունքը/վարքագիծը զերծ են ռասսիզմի և օտարատյացության դրսևորումներից: 3.1 Կառավարության համապատասխան իրավական ակտերով մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի, համամարդկային արժեքների, հակառասիստական ու հակաօտարատյացության, հակախտրականության և գենդերային հավասարության ուսուցման ռազմավարական առաջնահերթությունները ամրագրված են կրթության ոլորտի քաղաքականության փաստաթղթերում:	Հանրակրթական դասագրքերի բովանդակության հետազոտություններով չեն բացահայտվել դասագրքերում ռասսիզմ և օտարատյացություն սերմանող բովանդակություն պարունակող թեմաներ և տեքստեր: Մինչև 2020թ. բոլոր ուսուցիչներն անցել են վերապատրաստումներ: Հանրակրթական ուսումնական հաստատություններ մշտադիտարկումները չեն բացահայտել աշակերտ-աշակերտ, ուսուցիչ-աշակերտ, ուսուցիչ-ուսուցիչ և այլ փոխհարաբերություններում, ինչպես նաև դասավանդման գործընթացում ռասսիզմի և օտարատյացության դրսևորումներից: Նվազել են ռասսիզմի, օտարատյացության, գենդերային, կրոնական, էթնիկ և այլ պատկանելությամբ խտրականություն պարունակող միջոցառումների անցկացման, ուսուցիչների վերաբերմունքի դեպքերը:	2 տարի շարունակ-վող 1 տարի

ներգաղթյալ երեխաների՝ կրթության մեջ լիարժեք ներառման ու նրանց նկատմամբ վատ վերաբերմունքի ու խտրականության դրսևորումների:	համակարգմի առնվազն 30%-ը: 3. Կրթության զարգացմանը մինչև 2030թ. Ռազմավարական ծրագրում ամրագրել մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի, համամարդկային արժեքների, հակառասիստական ու հակաօտարատյացության, հակախտրականության և գենդերային հավասարության ուսուցման ռազմավարական առաջնահերթությունները:			
ՀՈԴՎԱԾ 78 **Կողմերը փոխշահավետության հիման վրա և ապահովելով մտավոր սեփականության իրավունքների պատշաճ եւ արդյունավետ պաշտպանություն, պետք է խթանեն քաղաքացիական գիտահետազոտության, տեխնոլոգիական զարգացման եւ նորարարության բոլոր ոլորտներում համագործակցությունը:**				
1. Առ այս պահը պետության կողմից Հայաստանի գիտական ոլորտում չի ներկայացվել մշակված ծրագիր կամ տեսլական, որը կնկարագրեր, թե որն է գիտության նկատմամբ պետական պահանջը, և որոնք են, ըստ առաջնահերթության, գիտության ոլորտները/ ճյուղերը, և որ ուղղությամբ է զարգանում գիտությունը: 2. ՀՀ Գիտության պետական կոմիտեի կողմից կամ այլ կազմակերպությունների/ հիմնադրամների կողմից	1. Մշակել և ընդունել գիտության նկատմամբ պահանջի տեսլական: Ըստ այդմ, ըստ առաջնահերթության ներկայացնել գիտության ոլորտների և ճյուղերի մշակած և հստակեցրած ցանկ:	Առկա է պետության կողմից առաջնահերթություն տված գիտության ճյուղերի ցանկ և դրանց մշակման չափանիշների ցանկ: Առկա է ֆինանսավորված գիտահետազոտական աշխատանքների բաց և թափանցիկ ընտրություն: Գիտահետազոտության համատեքստում բարեվարքության և որակի ճանաչում, ընդունում և ապահովում:	Առաջնահերթության ոլորտները սահմանվում են ըստ պետական պահանջի, որոնք արտացոլված են Կրթության մինչև 2030թ. զարգացման ծրագրում: Ֆինանսավորված գիտահետազոտական աշխատանքների բաց և թափանցիկ ընտրություն: Զարգացումներն ապահովվում և ստուգվում է Բաս հասարակության հիմնադրամներ –	TBD

ֆինանսավորվում են մի շարք գիտական ծրագրեր՝ առանց գիտահետազոտության ֆինանսավորման հստակեցված չափանիշների և սկզբունքների: Համագործակցության շրջանակում խրախուսելի է նման չափանիշների ձևավորումն ու ներկայացումը, որը կօգնի համագործակցության ընթացքում զերծ մնալ կոռուպցիոն ռիսկերից: 3. Գիտահետազոտության զարգացման համատեքստում ակադեմիական բարեվարքությունն ու դրա խախտումներն ուղղակի կապված են գիտահետազոտական որակի հետ, հետևաբար դրանց բացահայտումն ու մշտադիտարկումը կնպաստի գիտահետազոտական գործունեության և որակի բարելավմանն ու ամրապնդմանը:	2. Ներկայացնել համագործակցության շրջանակում հետազոտությունների ֆինանսավորման հստակեցված չափանիշներ և վերջինս դարձնել բաց և թափանցիկ՝ ֆինանսավորման նպատակայնությունը, հաշվետվողականությունը և արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: 3. Գիտահետազոտության զարգացման համատեքստում մշակել արդյունավետ մեխանիզմներ բարեվարքության և գիտահետազոտության որակի ապահովման համար: Կատարել բարեվարքության խախտումների մշտադիտարկում:		Հայաստանի (2013, 2015) և Համաշխարհային բանկի կողմից կատարված հետազոտությունների և վերլուծության միջոցով:[1]	
(c) հետազոտական հնարավորությունների ու Եվրոպական միության՝ հետազոտությունների եւ նորարարությունների շրջանակային ծրագրին Հայաստանի Հանրապետության հետազոտական կառույցների մասնակցության ընդլայնման հետ կապված նախաձեռնությունները.				

[1]"Higher Education in Armenia Today: a focused review" by Open Society Foundations – Armenia / http://www.osf.am/wp-content/uploads/2013/11/OSF_HE_report.pdf, "Strengthening Integrity and Fighting Corruption in Education: Armenia" by Open Society Foundations – Armenia/ http://www.osf.am/wp-content/uploads/2016/01/Integrity-report_final_en_12.11.2015.pdf, "Addressing Governance at the Center of Higher Education Reforms in Armenia" by the World Bank"/ http://documents.worldbank.org/curated/en/301751468218419533/pdf/776690WP0P127300governance000final.pdf

Պետական և/ կամ միջազգային համագործակցության արդյունքում ձևավորած նախաձեռնությունների և ծրագրերի հայտարարությունները շատ հաճախ դրվում են կամ ժամկետին շատ մոտ, որի արդյունքում պոտենցիալ մասնակիցներն արդեն չեն հասցնում մասնակցել մրցույթին, կամ՝ ընտրությունն ուղղակի անցկացվում է փակ, և պարբերաբար նույն մասնակիցներն են դիմում այս կամ այն նախաձեռնությանը:	1. Մշակվում է մեխանիզմների և նախաձեռնությունների պլան և ապահովում այդ մեխանիզմների թափանցիկ և հաշվետվողական լինելը: 2. Ապահովվում է ծրագրերի և նախաձեռնությունների ոլորտի համապատասխան բոլոր ներկայացուցիչներին հավասարապես հասանելի լինելը:	Ծրագրերի վերաբերյալ հայտարարությունները տեղադրվում են բաց և թափանցիկ (ժամկետի մեջ): Առկա է հայտարարությունների համաչափ տարածում ոլորտի ներկայացուցիչների շրջանում:	Գործընթացներն ապահովվում են և ստուգվում ըստ ստուգաթերթիկի՝ հաշվի առնելով հայտարարությունների տեղադրման ժամկետների եւ հայտադիմումների ներկայացման վերջնաժամկետների միջև եղած ժամանակահատվածը: Գործընթացները ստուգվում են ըստ ֆակուլտետներին/ ամբիոններին ներկայացրած ծրագրային հայտարարությունների ստացման/ հաստատման ստուգաթերթի:	TBD Տարեկան
(e) հետազոտական եւ նորարարական աշխատանքներին երկու կողմերից ներգրավված գիտնականների, հետազոտողների եւ հետազոտական այլ անձնակազմի համար վերապատրաստումները և շարժունակության ծրագրերը.				
Ակադեմիական ազատ տեղաշարժն իրականացվում-համակարգվում է բուհերի կամ գիտահետազոտական կենտրոնների ներքին կանոնակարգով, և հաճախ այս ազատ տեղաշարժը և ակադեմիական ազատությունները սահմանափակվում են կամ ոտնահարվում. ըստ այդմ, անհրաժեշտ է կատարել բուհերի և հետազոտական կառույցների ներքին կանոնակարգերի և նման կետերի մշտադիտարկում, վերանայվում են կանոնակարգերը և բացառվում է	Իրականացվում է ակադեմիական ազատ տեղաշարժը:	Մասնագետների և գիտահետազոտողների (այդ թվում՝ նոր) ծրագրերի մասնակցության զգալի աճ է գրանցվում:	Գործընթացը ապահովվում է և ստուգվում համաձայն Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի չափանիշների:	TBD

այս և նմանատիպ կետերի ընդգրկումը կանոնակարգերում:				
ՀՈԴՎԱԾ 93. Համագործակցությունն ու քաղաքական երկխոսությունն ակտիվացնելու համար Կողմերը պետք է փոխգործակցեն կրթության եւ վերապատրաստման ոլորտում՝ Հայաստանի Հանրապետության կրթության եւ վերապատրաստման համակարգերը Եվրոպական միության քաղաքականություններին ու գործելակերպերին մոտարկելու նպատակով: Կողմերը պետք է համագործակցեն ամբողջ կյանքի ընթացքում կրթությունը խթանելու հարցում, ինչպես նաեւ **խրախուսեն կրթության եւ** վերապատրաստման բոլոր մակարդակներում համագործակցությունն ու թափանցիկությունը՝ հատուկ ուշադրության կենտրոնում պահելով մասնագիտական եւ **բարձրագույն կրթությունը:**				
Հայաստանը 2003 թվականից մասնակցում է TIMSS միջազգային ստուգատեսին՝ պետական բյուջեի միջոցներից տարեկան վճարելով անդամավճար: Սակայն ստուգատեսի անցկացման և արդյուքների հրապարակման հետ պարբերաբար ծագում են թափանցիկությանն ու հաշվետվողականությանը առնչվող խնդիրներ: Մասնավորապես, Հայաստանի 2007թ. մասնակցության տվյալները կազմակերպիչների կողմից որակազրկվել են, քանի որ դպրոցներում ստուգատեսի անցկացման ընթացքում տեղ են գտել խախտումներ և արդյունքների կեղծում: 2015թ. ստուգատեսում Հայաստանի մասնակցության արդյունքները հրապարակվեցին 2 տարի ուշացմամբ, չնայած որ բոլոր մյուս երկրների արդյունքների համապարփակ վերլուծությունը հրապարակվել է 2016թ. նոյեմբերին: Ավելին, պաշտոնական որևէ աղբյուր չի պարզաբանել, թե որն էր	1. Երաշխավորել ՀՀ մասնակցությունը TIMSS, PISA և PIRLS ստուգատեսներին, ինչպես նաև կրթության ոլորտի զարգացման ռազմավարական մոտեցումներն ու քաղաքականությունը մշակել՝ ելնելով հիշյալ ստուգատեսների արդյունքների համակողմանի վերլուծությունից: Ապահովել ստուգատեսների կազմակերպման, անցկացման և արդյունքների հրապարակման գործընթացների թափանցիկությունը, բարեվարքությունը և հաշվետվողականությունը:	2.1. ՀՀ մասնակցել է TIMSS 2019, PISA 2021 և PIRLS 2021 ստուգատեսներին: Մասնակցության արդյունքները հրապարակված են և վերլուծված:	2. TIMSS 2019, PISA 2021 և PIRLS 2021 ստուգատեսների արդյունքները հրապարակված են միջազգային ամփոփիչ հաշվետվություններում և հասանելի են միջազգային և տեղական շահագրգիռ բոլոր կառույցների և անհատների համար:	2018-2021

արդյունքների չիրապարակման պատճառը: Կրթության զարգացման 2010-2015թթ. Ծրագիր օրենքով նախատեսված է Հայաստանի մասնակցությունը PISA և PIRLS ստուգատեսներին: Սակայն, Օրենքով սահմանված այս դրույթի կատարումը կառավարության կողմից այդպես էլ չապահովվեց և օրինազանց պաշտոնյաների նկատմամբ պատասխանատվության որևէ միջոց չկիրառվեց:				
Կրթության ոլորտի ֆինանսավորման ծավալները տարեցտարի կրճատվում են: Դրան զուգահեռ տարեցտարի ավելանում են կրթության ոլորտին պետական բյուջեից, ինչպես նաև միջազգային ֆինանսական կառույցների կողմից տրամադրվող վարկային ծրագրերից տարբեր այլընտրանքային ծրագրերի ֆինանսավորումը, որոնց արչդյունավետությունն ու նպատակահարմարությունը՝ բոլորի համար որակյալ կրթության հասանելիության, կրթության որակի բարելավման տեսանկյունից պատշաճ հիմնավորված և ուսումնասիրված չեն:	Մշակել և ներդնել պետական բյուջեից կրթության ոլորտի ծրագրերի ֆինանսավորման որոշումների կայացման գործընթացում առաջնահերթությունների կիրառման այնպիսի համակարգ, որը կապահովի բոլոր սովորողների համար հավասարապես հասանելի և որակյալ պարտադիր 12-ամյա անվճար կրթության ապահովման ծրագրերի ֆինանսավորումը:	Մշակված և ներդրված է ՀՀ պետական բյուջեից կրթությանը հատկացված միջոցներից, ինչպես նաև պահուստային ֆոնդից կրթական ծրագրերի (բացառությամբ պետական հանրակրթական դպրոցներին, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններին, բուհերին և գիտությանը հատկացվող պարտադիր տարեկան ֆինանսավորման) իրականացման համար տարբեր հիմնադրամների, հասարակական կազմակերպությունների և այլ կառույցների դրամաշնորհներ և այլ տեսակի ծրագրային օժանդակության և ֆինանսավորման տրամադրման համար մրցութային կարգ: Ներդրված են պետական բյուջեից կրթությանը հատկացվող, ինչպես նաև պահուստային ֆոնդից ֆինանսավորվող ծրագրերի առաջնահերթությունների արդյունավետության գնահատման չափանիշներ և ընթացակարգ:	Բարձրացել է ՀՀ պետական բյուջեից կրթական համակարգին հատկացվող ֆինանսական ռեսուրսների հասցեականությունը, նպատակայնությունն ու արդյունավետությունը՝ ի շահ կլրթության ոլորտում սոցիալական արդարության ամրապնդման, յուրաքանչյուր երեխայի համար կրթության իրավունքի լիարժեք և որակյալ իրացման և համընդհանուր ներառականության ապահովման՝ հիմք ընդունելով կրթության մեջ սոցիալական արդարության և ներառման ՏՀԶԿ, Յունեսկոի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ստանդարտներն ու ԿԶՆ չափորոշիչները:	2018

		Մշակված և ներդրված է նման ծրագրերի ֆինանսավորման վերաբերյալ որոշումների կայացման մասնակցային, թափանցիկ և հաշվետու համակարգ:		
Կրթության համակարգը տարեցտարի օգտագործվում է որպես ծավալուն ադմինիստրատիվ ռեսուրս՝ նախընտրական և հետընտրական փուլերում չարաշահումների, ծնողների ահաբեկման, գնահատականների միջոցով ծնողների մանիպուլյացիաների, որոշակի պատմույթի պրոպագանդման և այլնի համար: Սրա մասին են փաստում մամուլի հրապարակումներն ու անկախ մշտադիտարկող առաքելությունների զեկույցները:	Բացառել գործադիր իշխանության անհիմն միջամտությունն ու վերահսկողությունը, ինչպես նաև քաղաքական կուսակցությունների մասնակցությունն ու ներգրավվածությունը կրթական հաստատությունների, մասնավորապես՝ դպրոցների և բուհերի կառավարման, ինչպես նաև դրանց կողմից իրենց օրենսդրությամբ վերապահված գործառույթների իրականացման գործընթացներում:	Կրթության օրենսդրությամբ արգելված է կրթական հաստատությունների կառավարման մարմիններում քաղաքական պաշտոն զբաղեցնողների, քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների, այլ բարձրաստիճան պաշտոնյաների, գործադիր իշխանության 1-ից ավելի ներկայացուցիչների ներկայացվածությունն: Օրենքով սահմանված են կրթական հաստատությունների կառավարման գործընթացքում շահերի բախումը և դրա սահմանափակումները:	Օրենսդրությամբ արգելված է կրթական հաստատությունների կառավարման խորհուրդներում քաղաքական պաշտոն զբաղեցնողների, կուսակցությունների, այլ բարձրաստիճան պաշտոնյաների անդամակցումը, ինչպես նաև սահմանված են շոհերի բախումների բոլոր դեպքերը՝ իրենց պատշաճ արձագանքման մեխանիզմներով, հիմք ընդունելով շահերի բախման օրենսդրության լավագույն միջազգային չափորոշիչներն ու ԹԻՀԿ ստանդարտները:	2018
ՀՀ 2015-2018 հակակոռուպցիոն ռազմավարության կրթության ոլորտը ճանաչվել էր կերակա ոլորտ՝ հաշվի առնելով ոլորտում կոռուպցիոն ռիսկերի վերաբերյալ բազմաթիվ ուսումնասիրությունների, հետազոտությունների և գնահատումների արդյունքները: Ռազմավարությունից բխող գործողությունների ծրագիրը, որը պետք է գործնականում ապահովեր գնահատված կոռուպցիոն ռիսկերի չեզոքացմանն ուղղված գործուն	Ապահովել Կրթության ոլորտում հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի որակյալ, արդյունավետ և թափանցիկ իրականացումը, ինչպես նաև ծրագրի ձեռքբերումների և ձախողումների վերաբերյալ հաշվետվողականությունն ու թափանցիկությունը: Հակակոռուպցիոն նոր	Կրթության ոլորտում հակակոռուպցիոն գործողությունների ծրագրով սահմանված կոռուպցիոն ռիսկերը վերացված են կամ նվազեցված: Հակակոռուպցիոն նոր 2019-2022 ռազմավարության շրջանակում կրթության ոլորտը ճանաչված է առաջնահերթ ոլորտ: Նոր ռազմավարութան գործողությունների ծրագիրը ներառում է նախկինում ավարտին չհասցված ռիսկերի ուղղությամբ աշխատանքները, ինչպես նաև սահմանում է գործողություններ՝ ուղղված նոր հայտնաբերված և	Նոր հակակոռուպցիոն 2019-2022թթ. ռազմավարությամբ կրթության ոլորտը ճանաչվել է գերակա ոլորտ, մշակվել է հակակոռուպցիոն գործողությունների ծրագիր, որը համակողմանիորեն հասցեագրում է բոլոր առկա և գնահատված ռիսկերի չեզոքացմանն ուղղված քայլերն ու գործողությունները՝ ՏՀՁՄ հակակոռուպցիոն ցանցի առաջարկությունների և ստանդարտների համաձայն:	2018-2019

քայլերի ձեռնարկումը ընդունվել է ՀՀ կառավարության կողմից միայն 2018թ. հունվար ամսին՝ ըստ էության իրականացման համար թողնելով ընդամենը 11 ամիս ժամանակահատված՝ 3 տարվա փոխարեն:	2019-2022 ռազմավարության շրջանակում կրթության ոլորտը կրկին ճանաչել որպես առաջնահերթ ոլորտ և շարունակել ոլորտում գնահատված կոռուպցիոն և բարեվարքության ռիսկերի հասցեագրմանն ուղղված արդյունավետ գործողությունների իրականացումը:	գնահատված կոռոպցիոն ռիսկերի վերացմանը:		
1. ԵՄ երկրները միջինում կրթուսության ոլորտի վրա ծախսում են ՀՆԱ 4.9%-ը: Այնպիսի եվրոպական երկրներ, որոնք հարաբերականորեն կարճ ժամանակահատվածում կարողացել են կրթության որակի բարելավում արձանագրել, տարեկան կրթության վրա ծախսում են 5.2%-ից (Լիտվա) մինչև 6.1% (Ֆինլանդիա): Եվրապական երկրների շարքում կրթության վրա կատարվող ծախսերի նվազագույն շեմն ունեն Իռլանդիան, Բուլղարիան, Ռումինիան ու Սլովակիան, որոնք կրթությանը հատկանցնում են ՀՆԱ 3.3%-3.8%-ը: Հայաստանը ծրագրավորում է կրթության բյուջետային ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը հասցնել՝ 2018-ին 2.18%, 2019-ին՝ 1.99%, 2020թ.՝ 1.85%:	1. Բարձրացնել կրթության ոլորտի պետական ֆինանսավորման մակարդակը: Կրթության ոլորտում ներդնել ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործման մոնիթորինգի համակարգ:	1.1. Կրթության ոլորտի ֆինանսավորման ծավալները ավելանում են հասնելով 2019թ.-ին առնվազն ՀՆԱ 4%-ի. 2020թ.-ին 4.5%-ի և 2021թ.-ին 5%-ի: 1.2. Կրթության ոլորտի պետական ֆինանսավորումը աճում է առաջանցիկ տեմպով: Ուսումնական հաստատություններում ներդրվել են կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման մեխանիզմներ: Ներդրվել են ուսումնական հաստատությունների և ընդհանրապես՝ կրթության ոլորտի արդյունավետության գնահատման համակարգեր:	1. Կրթության ոլորտի ֆինանսավորման ծավալներն աճել են մինչև 5%: 2. Կրթության ոլորտի պետական բյուջետային ֆինանսավորման ծավալը յուրաքանչյուր տարի ավելանում է պետական բյուջեի ընդամենը ծախսերի տարեկան աճի տեմպը առնվազն 50 տոկոսով գերազանցող մակարդակով: Կրթության ոլորտում պետական բյուջեի ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությունը կազմում է առնվազն 3.5%: Կրթության ոլորտի պետական բյուջետային ծախսերի հարաբերակցությունը կազմում է պետական բյուջեի ծախսերի առնվազն 10.0%: Ուսումնական	2019-2021

			հաստատությունների առնվազն 50 տոկոսում ներդրվել է կատարողականի հիման վրա պետական բյուջետային ֆինանսավորման արդյունավետության գնահատման համակարգ, որը կառուցված է հաստատության վերջնարդյունքի և ծախսերի հարաբերակցության գնահատման վրա:	
2. Հոսքային և ենթահոսքային կրթությունը ներկայումս հասանելի է միայն առանձին գործող ավագ դպրոցների աշակերտների համար: Առանձին գործող ավագ դպրոցները հիմնականում տեղակայված են քաղաքային բնակավայրերում, մինչդեռ գյուղական բնակավայրերի համապատասխան տարիքի երեխաները մեծամասամբ սովորում են 12-ամյա միջնակարգ դպրոցներում: Այս դպրոցները շրջանավարտներիմ տրամադրում են միևնույն ավարտական վկայականը, սակայն մատոիցվող կրթական ծառայությունների որակի տեսանկյունից էապես զիջում են առանձին գործող ավագ դպրոցներին:	2. Երաշխավորել հանրակրթության ավագ մակարդակում որակյալ հոսքային ու ենթահոսքային կրթության համընդհանուր հասանելիությունն ու մատչելիությունը հանրապետության բոլոր միջնակարգ և առանձին գործող ավագ դպրոցներում սովորող երեխաների համար՝ այդ թվում տարբերակված ֆինանսավորման համակարգի մշակման և ներդրման միջոցով: Ապահովել որակյալ հանրակրթության հասանելիությունը գյուղերում՝ ներդաշնակեցնելով միջնակարգ դպրոցների եւ ավագ դպրոցների պետական ուսումնական	2. Հանրակրթության ավագ մակարդակում որակյալ հոսքային ու ենթահոսքային կրթությունը հասանելի է բոլոր միջնակարգ և առանձին գործող ավագ դպրոցներում սովորող երեխաների համար: Հանրակրթության ավագ մակարդակի ֆինանսավորման տարբերակված համակարգը մշակված է՝ շահագրգիռ կողմերի հետ մասնակցային և արդյունավետ քննարկումների միջոցով և ներդրված է ավագ մակարդակի հանրակրթական ծրագրեր իրականացնող ՀՀ բոլոր պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում: Գյուղական վայրերում գտնվող միջնակարգ դպրոցներից ԲՈՒՀ դիմողների թիվն ավելացել է: Քաղաքային եւ գյուղական բնակավայրերի միջեւ գիտելիքի եւ կարողությունների մակարդակների տարբերությունը կրճատվել է:	4. Որակյալ հոսքային և ենթահոսքային կրթությունը լիարժեք հասանելի է ՀՀ բոլոր համայնքներում և բնակավայրերում ապրող բոլոր երեխաների համար՝ անկախ նրանց սեռից, սոցիալական կամ այլ կարգավիճակից, հաշմանդամությունից, և այլն: Միջնակարգ եւ ավագ դպրոցների պետական ուսումնական ծրագիրը նույնն է:	2 տարի

	ծրագրերը, եւ միջնակարգ դպրոցներում նույնպես ընձեռելով առարկայի խորացված ուսուցում ընտրելու հնարավորություն:			
ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (UNICEF) հայաստանյան գրասենյակի կողմից վերջերս կատարված ուսումնասիրությամբ բացահայտվել է, որ երկու երեխայից մեկը Հայաստանում ենթարկվում է բազմակի զրկանքի: Այդ հետազոտության համաձայն, գյուղաբնակ երեխաների դեպքում առավել բարձր է երկուսից չորս տեսակի զրկանքներ կրելու հավանականությունը: 3-5 տարեկան քաղաքաբնակ երեխաների ընդամենը 19.6%-ն է զրկանք կրում վաղ մանկության կրթության ոլորտում, մինչդեռ նույն ոլորտում զրկանք կրող գյուղաբնակ երեխաների տոկոսաբաժինը գրեթե 30% է: Մեկ այլ ուսումնասիրությամբ, որը կատարվել է Save the Children կազմակերպության հայաստանյան գրասենյակի կողմից, հաստատվել է, որ 0-5 տարեկան երեխաների՝ վաղ մանկության զարգացման ծրագրերի մեջ ընդգրկման ցուցանիշը միջինը 28% է, եւ կրկին՝ քաղաքային բնակավայրերում ընդգրկման ցուցանիշը մոտ 35.6% է, իսկ	3. Մշակել եւ որդեգրել վաղ մանկության զարգացման քաղաքականություն՝ հաստատելով, որ այն ապահովում է վաղ մանկության զարգացման ծառայությունների արդար հասանելիությունը երկրի բոլոր շրջաններում: Ապահովել քաղաքացիական հասարակության եւ փորձագիտական հանրույթի մասնակցությունը, հատկապես վաղ մանկության զարգացման ծառայություններ մատուցողների տարբեր տեսակների, մոդելների եւ միջավայրերի զարգացման տեսանկյունից:	Հայաստանի բոլոր համայնքներում մատուցվում են վաղ մանկության զարգացման ծառայություններ, եւ վերջինս ներառում է. • Երեխայի խնամքի ծառայություններ՝ ի սատարումն ծնողների աշխատանքային զբաղվածության, • Ծնողների կրթություն եւ վերապատրաստում, ինչպես նաեւ ծնողների աշխատանքի եւ անձնական կյանքի հավասարակշռումը, • Վաղ կրթություն՝ երեխաների սոցիալ-տնտեսական զարգացումը, պոզիտիվ աշխարհայացքը եւ դիրքորոշումները խթանելու համար, • Լեզու եւ տառաճանաչություն, տարրական մաթեմատիկական հմտություններ, ֆիզիկական զարգացում, նախապատրաստում դպրոցին, քաղաքացիություն, • Հատուկ կարիքներ, խոցելի երեխաների համար երաշխիքների ապահովում, Օժանդակություն երեխաներին այն դեպքում, երբ ընտանիքի լեզուն տարբերվում է պետական լեզվից, եւ անհավասարության կրճատում:	Բոլոր համայնքները մատուցում են վաղ մանկության զարգացման ծառայություններ, եւ այդ ծառայությունները սովորական մանկապարտեզում մատուցելուց զատ առկա են այլ մոդելներ եւ միջավայրեր, օրինակ՝ տնային պայմաններում, համայնքի վարչական հաստատություններում, դպրոցներում :	Կորոշվի ավելի ուշ

գյուղականում՝ ընդամենը 16%: Վաղ մանկության զարգացման ծրագրերի մեջ ընդգրկումը կարող է զարգացնել երեխայի ճանաչողական հմտությունները, գրագիտությունը եւ սոցիալական հմտությունները, որոնք անհրաժեշտ են հաջողության հասնելու համար, ինչպես նաեւ՝ բարելավել դպրոցի տարրական դասարաններում առաջադիմության ցուցանիշները: Հաշվի առնելով աղքատության եւ բազմակողմ զրկանքի իրավիճակը գյուղաբնակ երեխաների եւ/կամ սոցիալ-տնտեսական ցածր կարգավիճակ ունեցող ընտանիքների երեխաների պարագայում, նրանց համար նախադպրոցական միջավայրի հասանելիությունն էլ ավելի հրատապ եւ կենսական խնդիր է Հայաստանի իրողության պայմաններում:				
4. Ի տարբերություն միջնակարգ կրթության, որում օգտագործվում են ներառական կրթության հասկացությունները եւ իրավանորմերը, բարձրագույն կրթության մեջ չկան ներառականությունն ապահովող իրավական դաշտ, մեխանիզմներ եւ գործիքներ: Չկա հատուկ կարիքներ ունեցող սովորողների համար բարձրագույն կրթություն ապահովելու համակարգային մոտեցում:	4. Բարելավել բարձրագույն կրթության սոցիալական կողմը, բարելավել գենդերային հավասարակշռությունը՝ հատկապես 3-րդ աստիճանում, եւ ընդլայնել հասանելիության եւ ավարտելու հնարավորությունները նվազ բարենպաստ պայմաններում ապրող սովորողների համար: Այս	Երկիրն ունի նորմատիվային-իրավական դաշտ, որն անդրադառնում է բարձրագույն կրթության սոցիալական կողմին: Բարձրագույն կրթության մասին օրենքում կա հատուկ դրույթ կրթության հատուկ կարիքներ ունեցող անձանց համար: ԲՈՒՀ-երն ունեն ռեսուրսներ (պետության կողմից հատկացված կամ տեղական) բարձրագույն կրթությունն հասարակության բոլոր խմբերին տրամադրելու համար (օրինակ՝ բրայլյան այբուբեն, միջոցներ նվազ բարենպաստ պայմաններում ապրող սովորողների	Ավելացել է բարձրագույն կրթության շրջանավարտների թիվը (բակալավրի աստիճան առնվազն 1-ին տարում)՝ հատկապես գյուղական բնակավայրերի, խոցելի խմբերի եւ կրթության հատուկ կարիքներ ունեցող անձանց շրջանում:	TBD

	գործողությունը ներառական կրթության ապահովման շրջանակում է:	ուսման վարձի հատուցման համար եւ այլն):		
5. Հանրային ծառայողների վերապատրաստման համակարգը ՀՀ-ում աչքի է ընկնում ցածր արդյունավետությամբ: Վերապատրաստման դասընթացները չեն ձևավորվում հանրային ծառայողների մասնագիտական կատարելագործման խնդիրներից ելնելով, չեն հիմնվում հանրային ծառայության գործառույթների իրականացման արդյունավետության ապահովման կարիքների վրա, հանրային ծառայողները բավարար մոտիվացիա չեն ցուցաբերում հաճախելու վերապատրաստմնան դասընթացներին և ձեռք բերելու նոր գիտելիք, կարողություններ և հմտություններ: Բացի այդ, վերապատրաստումային դասընթացներ անցկացնող դասախոսները ոչ միշտ են տիրապետում անհրաժեշտ գործնական հմտությունների և տեսական գիտելիքների, վերապատրաստումների համար նախատեսվող ծախսերը բավարար չեն համապատասխան ոլորտների լավագույն	5. Քաղաքացիական (հանրային) ծառայողների վերապատրաստման համակարգերը համապատասխանեցնել հանրային կառավարման մարմնի պահանջներին, հանրային ծառայողների գործառույթների շրջանակին և նրանց մասնագիտական առաջխաղացման կարիքներին:	Քաղաքացիական (հանրային) ծառայողների վերապատրաստման համակարգերը համապատասխանում են հանրային կառավարման մարմնի պահանջներին ու հանրային ծառայողի գործառույթներին: Վերապատրաստման ծրագրերը մշակվում են առաջատար ուսումնակրթական հաստատությունների կողմից՝ տեսական և կիրառական աշխատանքի մեծ փորձ ունեցող մասնագետների կողմից: Վերապատրաստման ծրագրերի մշակմանը նախորդում է վերապատրաստվող հանրային ծառայողների որակավորման բարձրացման կարիքների գնահատումը, որի արդյունքների հիման վրա ձևավորվում են վերապատրաստման ծրագրի գիտելիքի, հմտությունների և կարողունակության վերջնարդյունքները:	Հանրային ծառայողների վերապատրաստման համակարգը ընդգրկում է հետևյալ ենթահամակարգերը. վերապատրաստման կարիքների բացահայտմանը միտված հետազոտության մեթոդաբանություն, վերապատրաստման կարիքների հիման վրա վերապատրաստման կրթական և առարկայական ծրագրերի մշակման ընթացակարգ, վերապատրաստման գործընթացում դասավանդողների մրցութային ընտրության ընթացակարգ, որի առանցքային բաղադրիչը դասավանդողների տեսական և գործնական գիտելիքների համապատասխանության գնահատման մեթոդաբանությունն է:	1 տարի

մասնագետների ներգրավումը ֆինանսավորելու համար:				
6. Հայաստանի կրթական համակարգում բուհերը մեծամասամբ ապահովում են տեսական գիտելիքներ, որը բուհն ավարտած ուսանողի համար աշխատաշուկայում խնդիր է ստեղծում:	6. Մերտացնել մասնագիտական ուսումնական հաստատությունների և առաջին հերթին՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների կապը պոտենցիալ գործատուների հետ	Ուսումնական հաստատություններում կրթական ծրագրերը մշակվում են գործատուների կարիքները հաշվի առնելով: Մասնագիտությունների շրջանակն ու դրանցում մրցութային տեղերի քանակը որոշելիս կարևոր հանգամանք է հանդիսանում աշխատաշուկայի պահանջարկը:	Ներդրված է գործատուների կադրային պահանջմունքների գնահատման համակարգ: Կիրառական նշանակություն ունեցող մասնագիտությունների համար կրթական և առարկայական ծրագրերի զգալի մասը մշակվում է գործատուների պահանջմունքների և կարիքների գնահատման արդյունքների հիման վրա: Ներդրված է աշխատաշուկայի մոնիտորինգի համակարգ, որի արդյունքում գնահատվում է աշխատաշուկայի պահանջարկն՝ ըստ մասնագիտությունների կազմի, բովանդակության և թվաքանակի: Ընթացիկ տարվա մոնիտորինգի արդյունքների հիման վրա արդիականացվում է հաջորդ տարվա համար սահմանվելիք մասնագիտությունների կազմն ու ընդունելության տեղերի նվազագույն թիվը:	2 տարի

7. Ուսումնական հաստատություններում դասավանդողների մասնագիտական մակարդակն ուղղակիորեն առնչվում է ապահովող կրթության որակի հետ, հետևաբար կարևոր է, որ կրթության համակարգում դասավանդեն ոլորտի առաջատար մասնագետները: Մյուս կողմից նման մասնագետի համար ոչ միշտ է դասավանդելը գրավիչ՝ պայմանավորված ցածր աշխատավարձի և իր վրա դրված մեծ պարտականությունների և պատասխանատվության անհամամասնությամբ:	7. Բարձրացնել ուսումնական հաստատություններում դասավանդողների մասնագիտական մակարդակը, խթանել կրթության ոլորտում որակյալ մասնագետների ներգրավումը, այդ թվում՝ կրթական համակարգում աշխատանքի գրավչության բարձրացման միջոցով: Բարձրացնել կրթության ոլորտում աշխատանքի վարձատրության մակարդակը:	Ուսումնական հաստատություններում ներգրավված են համապատասխան ոլորտների լավագույն մասնագետները: Ուսումնական հաստատություններում աշխատանքը արժանապատիվ ու պատվաբեր է դիտվում ինչպես երիտասարդների, այնպես էլ ավագ սերնդի համար: Ուսումնական հաստատությունների աշխատակիցները շահագրգռված են շարունակաբար բարձրացնել իրենց գիտելիքի, հմտությունների և կարողունակությունների մակարդակը:	Կրթության ոլորտում աշխատանքի վարձատրության միջին մակարդակը առնվազն 20%-ով գերազանցում է 1 շնչի հաշվով ՀՆԱ մեծությունը: Բարձրագույն կրթության ոլորտում պրոֆեսորադասախոսական անձնակազմի միջին ամսական աշխատավարձը կազմում է հանրապետությունում 1 շնչի հաշվով ՀՆԱ պայմանական ամսական մեծության 150 տոկոսը: Ներդրված է ուսումնական հաստատությունների աշխատողների մրցութային ընտրության և առաջխաղացման մոտիվացնող համակարգ, որի հիմքում աշխատողների ներուժի կամ կատարողականի գնահատումն է բազմագործոն բանաձևերի կիրառմամբ: Ուսումնական հաստատություններում ներդրված են աշխատակիցների սերնդափոխությունը խթանող համակարգեր, որոնց գործարկմամբ տեղի է ունենում դասավանդող կազմի թարմացում՝ տարեկան առնվազն 5% չափով: Ուսումնական հաստատություններում	Մինչ 2021

			պահպանվում է դասավանդողների գենդերային համաչափությունը:	
8. Շատ հաճախ բարձրագույն կրթության երկրորդ մակարդակը (մագիստրատուրան) դիտարկվում է կամ ենթադրում զուտ բարձրագույն կրթության առաջին մակարդակի կրկնություն և հաճախ տեսական գիտելիքի ավելորդ կուտակում: Այս առումով իջնում է բարձրագույն կրթության երկրորդ մակարդակի (մագիստրատուրայի) արդյունավետությունն ու գրավչությունը: Այս համակարգը նաև չի ապահովում ուսանողին անհրաժեշտ հմտություններով, որը վերջինիս կկիրառեր աշխատաշուկայում:	8. Բարձրացնել բարձրագույն կրթության երկրորդ մակարդակի (մագիստրատուրա) արդյունավետությունը	Բարձրագույն կրթության երկրորդ մակարդակը գրավիչ է ուսանողների համար: Այն հնարավորություն է տալիս որակապես բարելավել ուսանողի գիտելիքը, հմտություններն ու կարողունակությունը: Մագիստրոսական կրթական ծրագրերը մշակվում են պոտենցիալ գործատուների (կիրառական ուղղվածություն ունեցող մասնագիտությունների պարագայում) անմիջական մասնակցությամբ: Բարձրագույն կրթության երկրորդ մակարդակի շրջանավարտի համար աշխատաշուկան ապահովում է առաջին մակարդակի համեմատությամբ աշխատանքի վարձատրության ավելի բարձր մակարդակ:	Բարձրագույն կրթության երկրորդ մակարդակում կրթական ծրագրերի բովանդակության կիրառական հատվածը ձևավորվել է պոտենցիալ գործատուների կարիքներից ու պահանջմունքից ելնելով: Դասավանդողների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմում գործատու կազմակերպությունների ներկայացուցիչները: Բարձրագույն կրթության երկրորդ և առաջին մակարդակների շրջանավարտներին գործատուների կողմից առաջարկվող աշխատանքի վարձատրության չափերը տարբերվում են առնվազն 25%-ով:	Մինչ 2021
(c) բարձրագույն կրթության ոլորտում համապատասխանեցման եւ համակարգված բարեփոխումների գործընթացի խթանում, ինչը բխում է Եվրոպական միության՝ Բարձրագույն կրթության օրակարգից եւ Եվրոպական Բարձրագույն կրթության տարածքից (Բոլոնիայի գործընթաց).				
1. . Ուսանողությունն Հայաստանում չի ընկալվում որպես բարձրագույն կրթության հիմնական եւ առաջնային շահառու, եւ նրանց հետ խորհրդակցությունները զուտ	1. Սովորողակենտրոն մոտեցում ներդնել բոլոր համակարգերում եւ հաստատություններում:	Ակադեմիական անձնակազն ավելի լավ է տեղեկացված դասավանդման եւ ուսումնառության սովորողակենտրոն մոտեցման, ինչպես նաեւ բոլոր առարկայական ոլորտներում հավասարակիցներից սովորելու	Գործընթացը ապահովվում է և ստուգվում համաձայն Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի չափանիշների:	Մարտ 2018 – Մարտ 2019

ձեւական են: Նորմատիվային իրավական դաշտում կամ պրակտիկայում ապահովված չեն սովորողակենտրոն մոտեցման հետեւյալ սկզբունքները. կառավարական հաստատությունների ներգրավում, ուսումնական ծրագրի ճկունություն, փոխակտիվություն, անհատականություն, օժանդակող եւ ոգեւորող ոուսումնական միջավայր: 2. Հայաստանում քաղաքականություն բարեփոխողներից ոչ մեկը նպատակային անդրադարձ չի կատարում գիտական հետազոտություններին: Հետազոտությունների նպատակները եւ որակը լրջորեն վտանգված են երկրի բարձրագույն կրթության համակարգում, եւ հետազոտության կապն դասավանդման եւ ուսումնառության հետ պատշաճ կերպով ձեւավորված չէ կամ իսպառ բացակայում է: 3. Որակի ապահովման քաղաքականությունը եւ ընթացակարգը երկրում խիստ ձեւական են եւ որեւէ փաստացի ազդեցություն չունեն կրթության որակի բարելավման վրա: Որակը չի ապահովվում դասավանդման եւ ուսումնառության	2. Ապահովել գիտահետազոտության որակի բարելավումը: 3. Բարձրագույն կրթության համակարգում, հատկապես՝ բուհերի կառավարման խորհուրդներում, ապահովել ուսանողների ավելի շատ	հնարավորություններ ընձեռելու առավելությունների մասին, Որակի ապահովման ներքին եւ արտաքին գործընթացները ներառում են որակի բարելավման տարբեր դասավանդման եւ ուսումնառության մակարդակում, եւ սովորողները մասնակից են ուսումնական ծրագրերի մշակմանը (ESG-ին համապատասխան), Ամրապնդել կապերը կրթության եւ հետազոտությունների միջեւ, խթանել հետազոտությունների վրա հիմնված ուսումնառությունը բոլոր շրջափուլերում եւ բոլոր մասնագիտական ոլորտներում, Սովորողների մասնակցությունը կառավարման կառուցվածքին՝ ողջամիտ գործառույթներով եւ տոկոսաբաժնով: Ամրապնդել կապերը կրթության եւ հետազոտությունների միջեւ, խթանել հետազոտությունների վրա հիմնված ուսումնառությունը բոլոր շրջափուլերում եւ բոլոր մասնագիտական ոլորտներում:		

մակարդակում, եւ կրթության որակին առնչվող քաղաքականության զարգացումները մնում են փաստաթղթերի մակարդակում՝ պրակտիկայում չունենալով որեւէ ազդեցություն:[2]	համամասնության ընդգրկումը			

Հարկային ոլորտ

ՄԱՍ I Նպատակները և ընդհանուր սկզբունքները Հոդված 4 Ներքին բարեփոխումներ. Կողմերը պետք է համագործակցեն՝ դ) վարչական կարողություն ամրապնդելու և իրավապահ մարմինների անկողմնակալությունը և արդյունավետ աշխատանքը երաշխավորելու շուրջ, ՄԱՍ IV Տնտեսական համագործակցությունը Հոդված 25-26 Կողմերը պետք է համագործակցեն հարկային ոլորտում պատշաճ կառավարումն ընդլայնելու հարցում՝ տնտեսական հարաբերությունները էլ ավելի կատարելագործելու հարցում 1. Կողմերն ընդունում են հարկային ոլորտում պատշաճ կառավարման սկզբունքները և պարտավորվում են իրականացնել դրանք, այլ կերպ ասած՝ թափանցիկության, տեղեկությունների փոխանակման և հարկային արդար մրցակցության սկզբունքներն այնպես, ինչպես Եւրոպական միության մակարդակով դրանք որդեգրվել են անդամ պետությունները: Այդ նպատակով պետք է մշակեն միջոցառումներ՝ արդյունավետ կառավարման այդ սկզբունքների արդյունավետ իրականացման համար:				
Հիմնախնդիրը	**Գործողությունը**	**Ակնկալվող արդյունքը**	**Հենանիշը**	**Ժամկետը**
Հարկային գործերով քննչական մարմինների անկախությունը հարկային մարմնից ապահոված չէ:	1. Օրենսդրորեն ամրագրել հարկային և մաքսային գործերով անկախության	Նպաստել հարկային և մաքսային գործերի արդար քննությանը, բացառելով հարկային քննչական	Կառուցվածքային փոփոխություններով հարկային և մաքսային գործերով քննչական	մինչև 2018 թվականի վերջ

[2] WB and CoE also stressed the importance of students' independent involvement in HEIs governance. https://rm.coe.int/16803073f5, http://documents.worldbank.org/curated/en/301751468218419533/pdf/776690WP0P127300governance000final.pdf

	երաշխիքները՝ վերանայելով հարկային գործերով քննչական գործառույթների իրականացումը ՀՀ ԿԱ ՊԵԿ ենթակայության ներքո:	մարմնի կողմից եկամուտների հավաքագրմանը անուղղակի կերպով մասնակցությունը:	մարմինները կտարանջատվեն ՀՀ ԿԱ ՊԵԿ կառուցվածքից և կներառվել քննչական ընդհանուր մարմնում:	
	2. Ապահովել հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի կողմից որոշումների կայացման գործընթացում արդար քննությունը՝ վերանայելով հանձնաժողովի այն անդամի մասնակցությունը հանձնաժողովի վարչական վարույթին, որը մասնակցություն է ունեցել ստուգման գործընթացին, բացառելով քննության ընթացքում հնարավոր ճնշումները ինչպես հարկ վճարողի, այնպես էլ հանձնաժողովի այլ անդամների վրա:	Նպաստել ստուգման ակտերի, հարկային և մաքսային մարմինների պաշտոնատար անձանց գործողությունները կամ անգործությունը բողոքարկման դեպքերում արդար քննության հնարավորությանը:	Պրակտիկայում բացակայում են դեպքերը, երբ ուղղակիորեն կամ անուղղակիորեն շահագրգռված հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի անդամը անձի մասնակցություն է ունենում բողոքարկվող ակտի քննարկմանը:	մինչև 2018 թվականի վերջ

Օդի որակ, ջրի որակ և թափոնների կառավարում

ՀՈԴՎԱԾ 46 Համագործակցությունը պետք է ուղղված լինի շրջակա միջավայրի որակի պահպանմանը, պաշտպանությանը, բարելավմանը և վերականգնմանը, մարդկանց առողջության պաշտպանությանը, բնական ռեսուրսների կայուն ձևով օգտագործմանը և միջազգային մակարդակով տարածաշրջանային և գլոբալ բնապահպանական խնդիրների լուծման միջոցառումների խթանմանը, ներառյալ հետևյալ ոլորտներում՝
(b) օդի որակ, (c) ջրի որակ և ջրային ռեսուրսների կառավարում, ներառյալ հեղեղների ռիսկերի կառավարում, ջրի սակավություն և երաշտներ,
(d) թափոնների կառավարում:

Հիմնախնդիրը	Գործողությունը	Ակնկալվող արդյունքը	Հենանիշը	Ժամկետը

Մթնոլորտային օդի ավելի քիչ աղտոտման անհրաժեշտություն:	Սահմանել մթնոլորտային օդն աղտոտող վնասակար նյութերի միջին օրական սահմանային թույլատրելի խտությունները և մոնիտորինգի չափանիշները՝ ըստ ԵՄ ստանդարտների:	Վնասակար արտանետումների թույլատրելի չափերի և այդ նութերի ցանկի հստակեցում, վնասակար արտանետումների քչացում, մթնոլորտային օդի ավելի քիչ աղտոտում: Որպես արդյուն՝ մթնոլորտային օդի որակի բարելավում և աղտոտված օդի հետևանքով զարգացող հիվանդությունների նվազեցում:	Համապատասխան չափանիշների ընդունում:	վեց ամիս
Մթնոլորտային օդի ավելի քիչ աղտոտման անհրաժեշտություն:	Օրենսդրորեն սահմանել մթնոլորտային օդն աղտոտող վնասակար նյութեր արտանետելու իրավունք տրամադրելու կարգը և այն համապատասխանեցնել ԵՄ ստանդարտներին:	Արտադրական միավորների և թույլատրելի կոնկրետ դեպքերի հստակեցում, նոր վնասակար արտանետումներ անող միավորումների քչացում, նոր արտադրական միավորների ավելի խիստ էկոլոգիական պատասխանատվության ենթարկում, մթնոլորտային օդի ավելի քիչ աղտոտում: Որպես արդյուն՝ մթնոլորտային օդի որակի բարելավում և աղտոտված օդի հետևանքով զարգացող հիվանդությունների նվազեցում:	Համապատասխան չափանիշների ընդունում:	մեկ տարի
Բնապահպանության նախարարությունը չի կարող կազմակերպել պոչամբարի գործողությունները: Որոշ դեպքերում պոչամբարները ծանրաբեռնված են կամ գտնվում են գետերում: Նոր պետական մարմինը կվերահսկի պոչամբարների	Սահմանել քրեական պատասխանատվություն գետերի և լճերում վտանգավոր նյութերի ապօրինի արտանետումների համար (մասնավորապես հանքարդյունաբերության	Գետերում ոչ մի պոչանք չի թափվում և ոչ մի վնաս չի հասցվում բուսական, կենդանական աշխարհին, և բնակավայրերի բնակչության առողջությանը: Մրգերի և	Նոր պետական մարմնի մշտադիտարկման չափանիշները:	վեց ամիս

շահագործումը, որպեսզի կանխեն նման աղետները:	պոչանքների): Բացի դրանից, պոչամբարի ոչ պատշաճ պահեստավորման կամ տեղափոխման արդյունքում պետք է քրեական պատասխանատվություն նախատեսվի նաև արտահոսքի համար:	բանջարեղենի վնասակար նյութերի նվազեցում:		
	Վերանայել հանքարդյունաբերական ձեռնարկությունների պոչամբարի դրենաժային համակարգը, մասնավորապես՝ աղտոտված ստորերկրյա ջրերի (օրինակ, Ամուլսարի հանքավայրի) կտրված տարածքներում: Սահմանել նման չափանիշներ ջրահեռացման համակարգի համար՝ապահովելու, որ վտանգավոր նյութերը խափանվեն ստորերկրյա ջրերի ներթափանցման համար:	Պոչամբարի հողերից մինչև ստորերկրյա ջրերի վնասակար նյութերի արտահոսքի նվազեցում: Ստորերկրյա ջրերի աղտոտման զգալիորեն կրճատում:	Համապատասխան չափանիշների ընդունում:	վեց ամիս
	Կառուցել կենցաղային աղբահանման և վերամշակման գործարան Երևանում (կամ մոտակայքում):	Երեւանի ավելի քան 55 հա տարածք զբաղեցնող գործող աղբավայրերի փակում: Աղբի վերամշակման ձեռնարկությունների ստեղծում: Բնապահպանական խնդիրները նվազեցում:	Թափոնների վերամշակման գործարանի առկայությունը:	երեք տարի

	Տրամադրել աղբահանության և վերամշակման ընկերություններին հարկային արտոնություններ, մասնավորապես, պլաստիկ և թղթի մշակման գործարանների լիովին հեռացնելու համար:	Հանրապետությունում եւ հատկապես խոշոր քաղաքներում չմշակված աղբի քանակի վերաբերյալ արմատական կրճատման արձանագրում: Նոր աշխատատեղերի ստեղծում:	Էական հարկային արտոնությունների սահմանում:	մեկ տարի